

## «ՔԱԶՄԱԳԱՂԱՓԱՐԱՆՈՍԱԿԱՆ» ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

### *Գագիկ Տեր-Հարությունյան*

Այն, ինչ կատարվում է ներկայումս աշխարհում, փորձագիտական հանրությունում գրեթե միանշանակ բնութագրվում է որպես համակարգային ճգնաժամ: Նման ձեւակերպումն արդարացված է, քանի որ կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում տեղի են ունենում էական փոփոխություններ, որոնք ուղեկցվում են տնտեսական անկունով, ահաբեկչության աճով, քաղաքական անկայունության նոր օջախների ստեղծմամբ: Նկատենք նաեւ, որ այդ երեւոյթների հետեւանքների վերաբերյալ կանխատեսումները տարաբնույթ են: Ստեղծված իրավիճակը ակնհայտորեն պարունակում է վտանգներ միջազգային հանրության բոլոր սուբյեկտների համար, լինեն դրանք գերտերություններ, թե «շարքային» պետություններ:

**Սպառնալիք եւ հնարավորություն.** Արտակարգ իրավիճակները ենթադրում են պետության եւ հանրության բոլոր ռեսուրսների կենտրոնացում ու համակարգված ռազմավարություն: Այդ համատեքստում՝ ցանկացած երկրի, այդ թվում նաեւ Հայաստանի գործունեության արդյունավետության հիմնական չափանիշներից է համապատասխանությունը արագ փոփոխվող իրադրությանը: Նման մոտեցումը բնավ չի ենթադրում զուտ արձագանքող, կրավորական դիրքորոշում արտաքին եւ ներքին մարտահրավերների հանդեպ. նախաձեռնությունը իրադրությանը համապատասխան լինելու բաղադրիչներից է:

Հատկանշական է, որ «ճգնաժամ» հասկացությունը չինական հիերոգլիֆներում պատկերվում է երկու նշանով, որոնցից մեկը նշանակում է «սպառնալիք», իսկ մյուսը՝ «աննախադեպ հնարավորություն»: Ուշագրավ է նաեւ, որ ճապոներենում «ճգնաժամ» արտահայտող հիերոգլիֆում այդ երկու նշաններին ավելացվում է երրորդը՝ «ուշադրությունը», որն իր մեջ կարծես թե կրում է եւ «համապատասխանության», եւ շրջակա միջավայրի (արտաքին ու ներքին) վերաբերյալ հստակ պատկերացումների իմաստը: Արեւելյան գրամտածողական սույն փիլիսոփայությունը մեր օրերում արդիականացվել եւ համակարգվել ու լայնորեն կիրառվում է առաջատար տերությունների (մասնավորապես՝

Միացյալ Նահանգների) ազգային անվտանգության հայեցակարգերում:

Սակայն պետք է ընդունել, որ ընթացող համակարգային փոփոխությունների ճշգրիտ ըմբռնումը դյուրին խնդիր չէ անգամ մտավոր խոշոր ռեսուրսներ ունեցող պետական կառույցների համար:

**Գաղափարախոսական ճգնաժամ.** Գլոբալ ճգնաժամի շուրջ մեկնաբանություններում շեշտադրումները գլխավորապես կատարվում են ֆինանսատնտեսական ոլորտում առաջացած դժվարությունների վրա: Մինչդեռ տնտեսական, ինչպես նաև քաղաքական արդի զարգացումները հետեւանք են գաղափարական ոլորտում ծագած ճգնաժամի: Արդյունքում արեւմտյան (հատկապես անգլոսաքսոնյան) հանրությանը բնորոշ ազատական գաղափարախոսական դրույթներն ու դրանց հետ միասնություն կազմող տնտեսվարման ձեւերը գիջում են իրենց մենատիրական դիրքերը: Դրա մասնավոր վկայություններն են.

- ❖ պետության դերակատարման եւ միջամտության էական աճը «ազատ շուկայի» կարգավորման խնդիրներում,

- ❖ ազատական ռազմավարությամբ գործող արեւմտյան խոշորագույն ընկերությունների սնանկացումը,

- ❖ վերջիններիս ազգայնացումը եւ պետական վերահսկողության տակ անցնելը:

Մասնավորապես, տնտեսագիտական հանրությունն այսօր սկսել է վերընթերցել կարծես թե լիովին մոռացության մատնված՝ Կարլ Մարքսի «Կապիտալը». օրինակ, Գերմանիայի գիտակրթական համակարգում նախկինում արհամարիվող այդ աշխատությունն այսօր վերահրատարակվել է աննախադեպ՝ 300 000 տպաքանակով:

Սակայն ստեղծված իրավիճակը սկզբունքորեն տարբերվում է նախորդ դարի 90-ականներին եղածից, երբ գաղափարախոսության ճգնաժամը հանգեցրեց խորհրդային համակարգի փլուզմանը եւ, որպես այդ իրողության հետեւանք, փորձ կատարվեց «օրենքից դուրս» հայտարարել սոցիալիստական-կոմունիստական գաղափարները: Ներկայիս իրադրության առանձնահատկությունն այն է, որ գաղափարախոսական վերագնահատումները բնավ չեն ենթադրում մոռացության մատնել ազատականության դասականներին: Տպավորությունն այնպիսին է, որ ներկայումս ծագած խնդիրները լուծելու համար կիրառվում է գաղափարական-տնտեսական ցանկացած մոդել կամ մեթոդ, միայն թե այն արդյունավետ լինի: Այլ խոսքերով՝ գործում է հանրահայտ այն սկզբունքը, ըստ որի՝ «հիմնախնդիրները լուծելու համար լավ են բոլոր մեթոդները, բացի վատերից»:

**Ազգային եւ ունիվերսալ գաղափարախոսություններ.** Վերոնշյալ սկզբունքը դեռեւս նախորդ դարի վերջերից հաջողությամբ կիրառում է Չինաստանը. այդ երկրում կարծես թե գտել են սոցիալիստական, ազատական եւ ազգային հիմնադրույթների ներդաշնակ համատեղման բանաձեւը: Այդ համատեքստում անհրաժեշտ է ընդգծել, որ ի տարբերություն ունիվերսալ համարվող տեսությունների (ազատական, սոցիալիստական), ազգային գաղափարախոսությունները, որպես կանոն, պակաս նյութականացված են եւ դրանցից բխող տնտեսվարման ձեւերը, ունենալով իրենց ազգային առանձնահատկությունները, առաջնային դերակատարում չունեն:

Այս վերջինի առումով բացառություն է կազմում, թերեւս, անգլոսաքսոնյան քաղաքակրթությունը, որի համար ազատականությունը գերակայող ազգային բնութագիր է: Այսինքն՝ անգլոսաքսերը գործել են ոչ թե ներմուծված, այլ իրենց իսկ ազգային գաղափարախոսական դրույթների համաձայն: Ըստ մեզ, մասնավորապես այդ հանգամանքով են պայմանավորված այդ քաղաքակրթության հսկայական ձեռքբերումները կենսագործունեության բոլոր ոլորտներում: Այլ խնդիր է, որ ներկայիս գլոբալացվող, սեղմվող աշխարհում ընթանում է տարբեր գաղափարախոսական դրույթների փոխազդեցություն՝ սիներգետիկ (փոխուժեղացնող) սկզբունքով: Արդյունքում ձեւավորվում են նոր, դիմամիկ պատկերացումներ, որոնք կարող են հատկապես արդյունավետ լինել գլոբալ հանրության ակտիվ սուբյեկտների համար:

Պատմական դիսկուրսում այլ է Ռուսաստանի պարագան, որտեղ հանրության գաղափարական դաշտը միշտ էլ հեռու է եղել ներդաշնակ լինելուց: Ազգայնական եւ ազատական գաղափարներ կրողների հետ միասին՝ ռուսական հանրության մի զգալի հատվածի հոգեկերտվածքին հարազատ են նաեւ սոցիալիստական պատկերացումները (այս վերջինի ազգային - գաղափարական հենքն ընդունված է համարել ռուսական գյուղական համայնքների ավանդական կացութաձեւը): Հայտնի է, որ ռուսաստանյան իրականությունում գաղափարական հակասությունների բախումը հանգեցրել է հեղափոխությունների (1917թ.՝ «սոցիալիստական», 1991թ.՝ «ազատական»)՝ դրանցից բխող բացասական հետեւանքներով եւ որեւէ մեկ տեսանկյունի արհեստական գերակայության հաստատումով: Ըստ ամենայնի, այս նկատառումներից ելնելով են Ռուսաստանի ներկայիս իշխանությունները փորձում ինչ-որ կերպ համատեղել տարբեր գաղափարական հոսանքները: Կարելի է կարծել, որ ներկայիս համակարգային ճգնաժամը պետք է որ նպաստի այդ երկրում գաղափարական ներդաշնակությանն ուղղված գործընթացների աշխուժացմանը:

**Չետելություններ.** «Բազմագաղափարախոսական» հանրությունների ձեւավորումն այսօր պայմանավորված է համակարգային ճգնաժամին համարժեք գործելու ձգտումով եւ գլոբալացվող աշխարհի տրամաբանությամբ: Հաշվի առնելով, որ ԱՄՆ-ը, Չինաստանը եւ Ռուսաստանը արդի աշխարհի առաջատարներն են, եւ այդ տերություններում տեղ գտած զարգացումները ներգործելու են գլոբալ գործընթացների վրա, կարելի է կարծել, որ «բազմագաղափարախոսական» հանրությունների ձեւավորման միտումը կարող է վերածվել օրինաչափության:

Վերոնշյալի համատեքստում՝ մեր հանրությունը նույնպես պետք է փորձի համարժեք գտնվել նոր ձեւավորվող իրողություններին: Մասնավորապես, պետք է ընդունել, որ մեզանում տարածում գտած մի շարք ազգային գաղափարներ եւ գաղափարախոսական համակարգեր այսօր կարիք ունեն նորոգման ու արդիականացման, ինչն, առաջին հերթին, ենթադրում է այդ ոլորտում տեսական մտքի զարգացում:

## ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

### *Ռուբեն Մելքոնյան*

Թուրքական իրականությունում էթնիկ ծագման խնդիրը շատ զգայուն է եւ հաճախ տեղ է գտնում նաեւ քաղաքականության մեջ, ուղղակիորեն առնչվում պետական պաշտոնյաներին, քաղաքական գործիչներին՝ դառնալով տարաբնույթ շահարկումների առիթ: Թուրքական «ազգային» պետությունում այլէթնիկ լինելն ընկալվում է որպես վիրավորանք եւ «օտար», ոչ յուրային լինելուն հավասարազոր մի բան: Այն նաեւ «մեղադրանքի» տարածված եւ հասարակության լայն շերտերին ընկալելի մեթոդ է:

Էթնիկ ինքնության խնդրին եւ դրա հետ կապված «մեղադրանքներին» հաճախ ստիպված են լինում անդրադառնալ նաեւ թուրքական բարձրաստիճան պետական պաշտոնյաները, քաղաքական գործիչները: Նրանց հայտարարություններում եւ մեկնաբանություններում նկատելի են անհստակություն, հակասություններ: Թուրքական բարձրաստիճան պաշտոնյաներից էթնիկ ինքնության համատեքստում շատ է շոշափվում վարչապետ Ռեջեփ Էրդողանի անունը եւ նշվում, որ նա «զտարյուն թուրք» է: Իր անվան շուրջ ընթացող քննարկումներին Էրդողանն իրեն բնորոշ անմիջական ոճով փորձել է պատասխանել դեռ 1997թ. դեկտեմբերի 6-ին Սդերթում ունեցած ելույթում. «Ինձ ասում են՝ «դու ռիզեցի ես, լազ ես»: Ես էլ ասում եմ՝ «լազ չեմ»: Գնացի հորս հարցրի, հայրս իր հերթին իր մեծ պապին էր հարցրել, որը մոլլա է եղել: Նա էլ այս պատասխանն է տվել. «Վաղը մեռնելու ենք, եւ Աստված մեզ հարցնելու է. «Քո Աստվածն ո՞վ է, մարգարեդ ո՞վ է, կրոնդ ի՞նչ է»: Սակայն մեզ չի հարցնելու՝ «Ազգդ, ցեղդ ի՞նչ է»: Եվ երբ քեզ հարցնեն, ասա՝ «Փառք Աստծո, մուսուլման եմ» եւ անցիր»:

Սակայն եթե հետեւենք ավելի ուշ արտահայտած նրա մտքերին, ապա կտեսնենք, որ Էրդողանը հակասում է ինքն իրեն: Այսպես, 2004թ. մայիսի 21-ին Ռումինիայում նա հայտարարել է. «Աշխարհում արդեն գաղափարախոսությունները վերջացել են, ո՛չ էթնիկ եւ ո՛չ էլ կրոնական գաղափարախոսությունը մնայուն չէ»: Դրան հետեւել է նախորդ մտքերին հակասող եւս մի հայտարարություն. 2004թ. օգոստոսի 11-ին Վրաստանում նա ասել է. «Ես էլ եմ վրացի, մեր ընտանիքը Բաթումից Ռիզե գաղթած մի

վրացական ընտանիք է»: Իսկ 2005թ. ապրիլի 12-ին Նորվեգիայում էրդողանը հայտարարել է. «Ես ռիզեցի եմ, կինս՝ Սդերթից, թուրք չէ, արաբ է»: Մտքերի այսպիսի վայրիվերումներն իրավամբ հիմք են տվել թուրքական մամուլին պնդելու, որ էրդողանը ինքնության ճգնաժամի մեջ է:

Տարբեր դիտարկումներ եւ փաստեր թույլ են տալիս պնդել, որ Թուրքիայի իսլամացված հայության եւ նրա հետնորդների մեջ կա մի շերտ, որը, հայկական արմատներ ունենալով հանդերձ, ոչ միայն ժխտում է դա, այլեւ՝ փորձելով նաեւ շրջապատին ապացուցել իր «գտարյուն թուրք» կամ մուսուլման լինելը, դառնում է ընդգծված հակահայ: Այստեղ միանշանակ է նաեւ հոգեբանական կողմը. նրանցից շատերը հոգեբանորեն իրենց թշնամի են համարում հայության այն մասին, որն, ի տարբերություն իրենց, կարողացել է հավատարիմ մնալ արմատներին, եւ հենց նրանց էլ հռչակում է իր թիվ մեկ թշնամի: Հայկական ծագում ունեցողների հակահայկականության դրսևորման կարելիոր պայման պետք է համարել նաեւ Թուրքիայում արմատացած թշնամական մոտեցումը հայերի նկատմամբ, նրանք նաեւ հոգեբանորեն չեն ցանկանում պատկանել թշնամի ազգին, դրա համար էլ հաճախ ընտրում են տիրապետող ազգի մեջ ուժանալու ճանապարհը: Այս խնդրին անդրադառնալով՝ ազգագրագետ Հարություն Մարությանն արտահայտում է հետևյալ միտքը. «Մամուլի հրապարակումները, ուղղակի եւ անուղղակի քաղաքական կամ տնտեսական բնույթի ճնշումները կարող են բերել նրան, որ մարդիկ, ձգտելով ազատվել իրենց տրվող պիտակավորումներից, փոխում են շրջապատը, կտրում են վերջին կապերն իրենց ազգակիցների, նաեւ ազգականների հետ ու, փաստորեն, բռնում են ծուլման, ուժացման ուղին»:

Տարբեր աղբյուրներ հայկական կամ առնվազն ոչ «մաքուր թուրքական» ծագում են վերագրում շատ հայտնի թուրք ազգայնամուլների եւ սա, ինչպես նշեցինք, օգտագործվում է որպես քաղաքական շահարկումների թեմա: Նմանատիպ օրինակներից կցանկանայինք անդրադառնալ վերջերս հրապարակ նետված այն պնդմանը, համաձայն որի՝ Թուրքիայի ամենամուլի հակահայերից մեկը՝ Բանվորական կուսակցության նախագահ Դողու Փերինչեքը, ունի հայկական արմատներ: Հիշեցնենք, որ հենց նա է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ ամենաակտիվ պայքարողներից մեկը, որը Շվեյցարիայում դատապարտվեց նաեւ Ցեղասպանությունը ժխտելու համար: Թուրքական որոշակի շրջանակներ մեծ աղմուկ բարձրացրին եւ Փերինչեքին որակեցին «Լոզանի նվաճող»: Բանվորական կուսակցության ազգայնամուլ նախագահը Հայոց ցեղասպանության փաստը որակում է որպես «իմպերիալիստական սուտ»: Նրա

հետքերով է գնում նաև որդին, որը նույնպես լծված է Ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի գործին: Ավելորդ չէ նշել, որ Դոդու Փերինջեքը ներկայումս ձերբակալված է Թուրքիայում բավական աղմուկ հանած «Էրգենեքոն» ահաբեկչական կազմակերպության գործով:

Թուրքական մամուլում մեծ տեղ եւ արձագանք գտավ նրա արմատների մասին սկանդալային բացահայտումը: Այսպես, նշվում է, որ Դոդու Փերինջեքը ծագումով Երզնկայի Էդին (Ակն) գավառի Ափչաղա գյուղից է: Ավելորդ չէ նշել, որ Ակն գավառը հատկապես հայտնի է հայկական ծագումով կրոնափոխների առատությամբ, իսկ պատմական աղբյուրները հաստատում են, որ 1915-ից առաջ էլ այն եղել է գերազանցապես քրիստոնեաբնակ եւ այնտեղ ապրել են հիմնականում հայեր, հույներ:

Սակայն Փերինջեքի ծագման մասին ավելի լուրջ փաստերով հանդես եկավ թուրքական «Chronical» ամսագիրը: Յոդվածում մեջբերվում են արխիվային փաստաթղթեր, այն է՝ օսմանյան դատարանի գրանցումները, որոնք տալիս են տվյալ շրջանի ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական, կրոնական, էթնիկ պատկերի մասին տվյալներ. դրանք փաստում են, որ 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին շրջանում եղել է հոծ հայկական ներկայություն, նրանց մեծ մասը եղել են արհեստավորներ, հայերը հատկապես շատ են եղել Ակն գյուղաքաղաքում, մեծ թվով հայեր են ապրել նաև Ակնին ենթակա գյուղերում՝ Քեներ-գաբ, Ափչաղա, Իլիչ եւ այլն: Կոնկրետ Ափչաղա գյուղը, որտեղից սերում է Փերինջեքը, գերազանցապես հայկական բնակչություն է ունեցել: Գյուղապետը, գյուղի ավագանու անդամները եղել են հայեր: Դատական գրանցումներում պահպանված են անգամ նրանց անունները. օրինակ՝ Յակոբի որդի Քիրքոր, Արթինի որդի Քիրքոր եւ այլն: Ինչպես նշվում է հիշյալ հոդվածում, Ակնի հայերի մեջ նկատվել է բավական տարածված եւ միեւնույն ժամանակ զարմանալի մի օրինաչափություն. բոլորն ունեցել են տոհմանուններ (համեմատության համար նշենք, որ Թուրքիայում ազգանունների մասին օրենքը շրջանառության մեջ է դրվել միայն 1934թ. եւ դրանից հետո են թուրքերը սկսել կրել ազգանուններ), սակայն զարմանալի է, որ դրանց մեծ մասը թուրքերեն անուններից էր կազմված՝ Մուրաթօղլու, Դեղիրմենջիօղլու, Չիլինգիրօղլու, Այվազօղլու, Փերինջօղլու եւ այլն: Սակայն դատական գրանցումներն արձանագրել են մեկ այլ հետաքրքիր մանրամասն եւ առանձնահատկություն եւս. թեեւ գրեթե բոլորն ունեին թուրքական տոհմանուններ, սակայն կրում էին բացառապես հայկական անձնանուններ, իսկ թուրքական կամ օտար անձնանունները բացառություն են եղել: Կրկին դատարանի գրանցումներում արձանագրված է, որ Փերինջօղլուները հայեր էին, նույնիսկ կան դատական գործեր նրանց մասնակցությամբ,

որտեղ, օրինակ, նշվում է. «Հայկական միլլեթից (ազգից) Փերինչօղլու Ստեփանը եւ Խաչատուրը»: Դոդու Փերինչեքի պապի հայրը՝ Մեհմեթ Սադրք Փերինչօղլուն, ծնվել է Ափշաղա գյուղում, 1850թ., նույն գյուղում է ծնվել նաեւ նրա որդին՝ Մեհմեթ Ջենալ Փերինչեքը, 1887թ.: Սակայն, ինչպես նկատելի է, նրանց անձնանունները հայկական չեն, եւ փաստորեն խախտված է վերը նշված առանձնահատկությունը: Սա միգրացե կարելի է մեկնաբանել որպես բացառություն, սակայն կրկին դատարանի գրանցումներում պահպանված փաստերը լույս են սփռում ինչպես այս, այնպես էլ այլ հարցերի վրա: Այսպես, օսմանյան դատարանի գրանցումներում հստակ արձանագրված է, որ Մեհմեթ Սադրք Փերինչօղլուն «մուհթեդի» է, իսկ մուհթեդի նշանակում է կրոնափոխ: Այսինքն՝ պարզվում է, որ նա իսլամ է ընդունել 19-րդ դարի երկրորդ կեսին, բայց թե ինչ պատճառներով, չի ասվում: Սա նաեւ ցույց է տալիս, որ իսլամացման քաղաքականությունն՝ իր վերելքներով եւ վայրէջքներով, շարունակվել է օսմանյան պետության գոյության ողջ ընթացքում: Դոդու Փերինչեքը ահա հենց այս իսլամացված հայի սերունդն է. հայկական ծագում ունենալը մղել է նրան ինքնամերժման եւ թուրք ազգայնամոլության ուղին ընտրելուն:

Սակայն նույնիսկ այդ հանգամանքը Փերինչեքի նմաններին չի «ազատում» հենց թուրքական հասարակության կողմից որպես ոչ թուրքական ծագում ունեցողներ մեղադրվելու վտանգից: Այս մասին «Ակոս» թերթի լրագրող Բագրատ Էտուկյանն իր «Ո՞վ է Հայը» հոդվածում գրում է. «Հապա ի՞նչ ըսենք ազգուրացներուն: Ի՞նչ ազգուրաց, նոյնիսկ ազգատեսացներուն: Եկուր տես, որ հաւաքականութեան յիշողութիւնը թոյլ չի տար: Կը քաշէ ու կը բանայ ազգուրացին թաքնուած քօղը երեսէն եւ կը պարզէ այն, որմէ փախչած է ամբողջ կեանքին տելողութեան»:



## **Էրիան Էրսոյ. «ՉԱՄՇԵՆՑԻՆԵՐԸ ՔԻՉ ԵՆ ՉԱՃԱԽՈՒԻՄ ՄՉԿԻՐՆԵՐ»**

*Թուրք ազգագրագետ Էրիան Էրսոյը, որն աշխատում է Անկարայի Չաջեթեփե համալսարանում, Թուրքիայի համշենցիների խնդիրներով զբաղվող մասնագետներից է: Մասնավորապես, նրա հետաքրքրության ոլորտում է գտնվում սոցիալ-մշակութային փոփոխությունների ազդեցությունը համշենցիների կենսակերպի տարբեր կողմերի վրա: Նա չի պատկանում Թուրքիայի գիտնականների այն թեւին, որոնք համշենցիներին համարում են թյուրքական ցեղ, սակայն էթնիկ ինքնության հարցում նրա գնահատականներն ունեն փոքր-ինչ ոչ հստակ, մանվածապատ բնույթ: Վերջերս գիտնականը Հայաստանում էր: Ստորև ներկայացնում ենք նրա հետ թուրքագետ Ռուբեն Մելքոնյանի վարած զրույցը:*

*– Պարոն Էրսոյ, ե՞րբ եւ ինչպե՞ս եք սկսել զբաղվել համշենցիների խնդիրներով:*

– Չամշենի հետ ծանոթությունս պատահական եղավ. ես զբաղվում էի լեռնագնացությամբ: Քաջքարի լեռները բարձրանալիս իմ ճանապարհն անցնում էր Չամշենով. այդ վայրերի բուսական աշխարհը, անտառները հետաքրքրում են շատերին, սակայն ինձ, որպես ազգագրագետի, գրավող ուրիշ մի հանգամանք կար: Ես տեսա ինձ բոլորովին անծանոթ մի մշակույթ: Մինչ այդ ես տեղեկություն անգամ չունեի այդ ժողովրդի մասին, որը շարունակում է յուրահատուկ մշակութային սովորույթները, կանայք կրում են անատոլիական այլ կանանցից տարբերվող հանդերձանք, գլխաշոր, խոսում են յուրահատուկ բարբառով: Այս ամենը, իհարկե, առաջ բերեց որոշակի հետաքրքրություն: Սա 1980-ականների կեսերին էր. հինգ տարի հետո, 1989թ. սկսեցի ուսումնասիրություններս Չամշենում: Սկզբում նախապատրաստական աշխատանքներ արեցի, քանի որ մեզ՝ ազգագրագետներին համար չափազանց կարեւոր է այն վայրերի ժողովրդի վերաբերմունքը, որտեղ պետք է աշխատես: Ես ավելի շատ ուշադրություն դարձրի համշենցիների կենսակերպի որոշ կողմերի, մասնավորապես՝ յայլաներ (ամառային արոտավայրեր) բարձրանալու, այնտեղի կյանքի վրա սոցիալ մշակութային փոփոխությունների ազդեցության ուսումնասիրությանը, որն էլ հենց դարձավ իմ գիտական թեզի թեման:

– Իրո՞ք յայլաներ բարձրանալու սովորույթն այդքան մեծ նշանակություն ունի համշենցիների շրջանում:

– Հատկապես արեւմտյան խմբի համշենական ինքնության կառուցվածքում յայլաներ բարձրանալն ունի կարելու տնտեսական, հասարակական, մշակութային նշանակություն: Այն նաեւ համարվում է ավանդական համշենյան գյուղական տնտեսության մի մասնիկ: Յայլաներ բարձրանալը համշենցիները վերածել են իրենց մշակութային ինքնությունը տարբերակող մի բաղադրիչի: Հենց յայլաներում են տեղի ունենում ժողովրդական ծեսերը, սովորույթները, օրինակ՝ Վարդավառը, եւ նաեւ այս առումով է այն կարելու մշակութային ինքնության համատեքստում: Սակայն ներկայումս տեղի ունեցող տարբեր գործընթացների հետեւանքով այդ մշակութային ինքնությանը, յուրահատկությանը նույնպես վտանգ է սպառնում, որովհետեւ տուրիզմը ներխուժել է այդ ոլորտ. այդ ամենը (ժողովրդական ծեսերը) վերածվել է նաեւ զբոսաշրջիկներ գրավելու, այլ խոսքով՝ բիզնեսի միջոցի:

– Դուք, որպես համշենցիների խնդրով զբաղվող մասնագետ, պետք է որ քաջատեղյակ լինեք նաեւ նրանց թվաքանակի մասին:

– Թուրքիայում մարդահամարները էթնիկ լեզվի կամ մայրենի լեզվի հիման վրա չեն արվում, եւ այդ պատճառով մենք փոքրամասնությունների իրական թիվը ներկայումս հստակ չգիտենք:

– Սակայն վերջերս հրապարակվեց Թուրքիայի էթնիկ քարտեզը, եւ այնտեղ համշենցիների թիվը նշվում էր 13.000:

– Ո՛չ, դա շատ փոքր թիվ է, ամենաքիչը պետք է խոսել 50.000-ից: Իսկ եթե Հոփայի եւ արեւմտյան խմբերն իրար հետ հաշվենք, ապա ավելի շատ էլ կարող է լինել:

– Անդրադառնանք նաեւ էթնիկ ինքնության խնդրին: Հայտնի է, որ համշենցիների մեջ առկա են ինքնության դրսեւորման տարբեր ձևեր: Եթե մուսուլման համշենցիներին պայմանական խմբերի բաժանենք, ապա կարելի է ասել, որ նրանց մի խումբը գոնե արտաքուստ թուրք է ներկայանում, մի խումբն իրեն համարում է առանձին հեմշին ազգի ներկայացուցիչ, մի խումբն էլ ընդունում է իր հայկական ծագումը, սակայն նրանցից քչերն են համարձակվում այդ մասին բարձրաձայն խոսել: Նրանց շրջանում նկատվում են նաեւ արմատները որոնելու, ինքնության ճգնաժամի երեւույթներ:

– Իրենց բացահայտ հայ համարողները շատ քիչ են: Նունիսկ դժվար է նրանց մի խումբ ասել: Համշենցի լինելը միեւնույն ժամանակ նրանց հնարավորություն է տվել առանձնանալ շրջանի այլ ժողովուրդներից՝ վրացիներից, լազերից: Սակայն նրանց էթնիկ ինքնության շուրջ որոշակի խնդիրներ, կարծիքներ, տեսակետներ են առաջ գալիս, որոնք կապված են իրենց գործածած լեզվի եւ բառերի հետ: Իրականում չի կարելի ասել, թե համշենցիների լեզուն հայերենին շատ հասկանալի կամ համապատասխան է: Սակայն ակնհայտ է, որ դա նույն արմատն ունեցող լեզվի մի բարբառն է: Եվ եթե առաջնորդվենք հենց այս լեզվական հիմքով, ապա կարելի է կարծել, որ համշենցիները հայկական պատմական հիմք ունեն: Սակայն պետք է ուշադիր լինել, որովհետեւ կարող է շատ ռիսկային լինել լեզվի հիման վրա էթնիկ պատկանելության թեզը զարգացնելն ու առաջ տանելը: Ինձ հետ կապված մի օրինակ ասեմ. իմ մայրը եւ հայրը հունարեն են խոսում, սակայն հայրս ալբանացի է: Հորս գյուղը, որտեղ նրանք ապրել են, գտնվել է Հունաստանի հյուսիսում, այդ պատճառով նրա լեզուն հունարենն է, սակայն էթնիկ առումով նա ալբանացի է: Պոնտոս բերված իսլամացված ալբանացիների մեծ մասը հունարեն էր խոսում: Այսինքն՝ ուզում եմ ասել, որ մենք՝ հետազոտողներս, այս հարցում պետք է ավելի զգույշ եւ բժախնդիր լինենք:

*– Սակայն, պարոն էրսոյ, այդ վայրերում հզոր հայկական պետություն կամ գերիշխանություն չի եղել, որը կստիպեր այս ենթադրյալ ոչ հայ մարդկանց յուրացնել եւ կիրառել հայերենը: Ուզում եմ ասել, որ հայերենը չի եղել տիրապետող ազգի լեզուն, որն էլ ուղղակի կամ անուղղակի կպարտադրվեր այդ լեզվական խմբին չպատկանողներին:*

– Այո, Համշենի վիճակը մի քիչ տարբեր է: Այստեղ հստակ կա Համամ Ամատունու բերած 12 հազար բնակչության խնդիրը. ինչքան էլ դա միֆի երանգներ ունենա, սա հայ ժողովրդի հետ կապված մի պատմական հենք ունի: Սակայն արդյո՞ք այդ եկողները հոմոգեն էին, այսինքն՝ այդ բոլոր եկողները հայ էին, արդյո՞ք արաբներից փախչող այլ քրիստոնյաներ չկային, որոնք միացել էին Համամ Ամատունուն: Սրանք մենք չգիտենք, քանի որ տարածված բան է, որ գաղթի ժամանակ փոքր խմբերը միանում են մեծ խմբին, որպեսզի ավելի ապահով լինեն: Պետք է այս հարցերն ուսումնասիրել:

*– Սակայն մի անհերքելի փաստ, իրականություն էլ կա. այն է, որ այդ վայրերում ապրող քրիստոնյա համշենահայերը, որոնք 1915-ից առաջ կամ էլ հետո փախել են Ռուսաստան, ներկայումս Թուրքիայում բնակվող*

*մուսուլման համշենահայերի արյունակից ազգականներն են: Նրանք հայեր են, ինչպես՞ կարող է լինել, որ քրիստոնյա համշենցու էթնիկ ինքնությունը կասկածի տակ չէ, իսկ նրա մուսուլման ազգականի էթնիկ պատկանելությունը վիճահարույց է:*

–Այո, այդ պատմությունը գիտենք, սակայն խոսքն այն մասին է, թե 8-րդ դարում Յամամի գլխավորությամբ եկած զանգվածն արդյո՞ք 12 հազար էր, թե այդ թիվը մի փոքր առասպելական, խորհրդանշական է: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ համշենցիները շարունակում են մի շարք հայկական սովորույթներ, օգտագործում են հայերեն բառեր, տերմիններ, դարձվածներ, եւ այս ամենը չէր կարող ի հայտ գալ սոսկ մի շփման կամ էլ տիրապետող լեզվի գերիշխանության պատճառով: Անկասկած, պատմական կապեր գոյություն ունեն: Եվ համշենցիներ էլ կան, որոնք այս մասին հայտարարում են. գաղափարական առումով ամենավերջին բանը, որ պետք է սպասել համշենցուց, այն է, որ նա կասի. «Ես հայ եմ»: Իսկ հայ լինելը Թուրքիայում հպարտանալու, գլուխ գովելու բան չէ, այլ մի շատ վտանգավոր հանգամանք, որը պարունակում է օտարվելու, մեկուսացվելու մեծ ռիսկ:

*–Բայց երբեմն, օրինակ՝ Ստամբուլում բնակվող համշենցիների մեջ կարող ենք հանդիպել մարդկանց, որոնք իրենց իրական էթնիկ պատկանելության մասին խոսում են, արտահայտվում:*

–Եվ ի՞նչ են ասում:

*–Օրինակ, մի քանի ամիս առաջ թուրքական «Յենի Աքթուել» ամսագրում համշենցի մի փաստաբան Քեմալ Մութի անունով, որը բնակվում է Ստամբուլում, ասում էր, որ համշենցիները ոչ թե թուրքական ցեղ են (ինչպես ասվում է), այլ ունեն հայկական ծագում, սակայն վախենում են դա արտահայտել՝ կապված Ձեր ասած մեկուսացվելու վտանգի հետ:*

–Նույնիսկ ոչ թե մեկուսացվելու կամ օտարացվելու, այլ թիրախ դառնալու վտանգ կա, ազգայնամոլների թիրախը: Հիմա այս բանը քրդերի հետ է տեղի ունենում, սակայն անկանխատեսելի է, թե հայի կամ իսլամացված հայի պիտակ կրելը ինչ հետեւանքներ կարող է ունենալ: Այսօր, կարելի է ասել, համշենցիների վրա էթնիկական ճնշում ասես թե չկա. չկա, քանի դեռ համշենցիներն իրենց էթնիկ պատկանելությունը չեն արտահայտում, պաշտոնական գաղափարախոսության, ազգային պետության հետ խնդիր չեն ունենում: Սակայն երբ սկսեն այս մասին խոսել, նրանց հանդեպ մի շարք արգելքներ, խոչընդոտներ, ճնշումներ ի հայտ կգան:

– Ընդհանրապես այլ ազգերի, նրանց կրոնների, մշակույթների հանդեպ թուրքիան ունի, իմ կարծիքով, բարդությամբ վարված եւ չափազանց զգայուն վերաբերմունք: Օրինակ, հայտնի է, որ թուրքիան մզկիթների պակաս չունի, եւ ամենուր կառուցվում են նորանոր մզկիթներ, սակայն այս տարի ես անծամք եմ տեսել, որ Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցին, որն անցյալ տարվանից վերանորոգվում էր, վերածվել է մզկիթի, սակայն ակնհայտ է եւ պարզ, որ դա եկեղեցի է, նույնիսկ պատերի խաչերն են մնացել: Սա ինչպե՞ս կմեկնաբանեք:

– Դա քաղաքականություն է, ամբողջ Անատոլիայում հունական, հայկական շատ եկեղեցիներ այդպես փոխվել են: Ավելացնեմ, որ այդ քաղաքականությունը միայն դրանով չի սահմանափակվում, օրինակ՝ ամբողջովին քրիստոնյա ասորիներով բնակեցված գյուղում պետությունը մզկիթ է կառուցում, իմամ նշանակում: Ալեւիների գյուղերում (իսկ հայտնի է, որ ալեւիները մզկիթ չեն գնում) կրկին մզկիթ է կառուցել: Սրանք գաղափարախոսական երեւույթներ են. թե չէ ես չեմ կարծում, որ պետությունը այդքան փող ունի, որ չօգտագործվող մզկիթներ կառուցի: Նույնպիսի երեւույթ կա նաեւ Անիի հետ կապված, օրինակ՝ նշվում է ոչ թե այն, որ Անին հայկական քաղաք է եղել, հայոց թագավորության մայրաքաղաքը, այլ որ սա այն վայրն է, որտեղից սելջուկ թյուրքերն առաջին անգամ մտան Անատոլիա:

– Իմիջիայլոց, այդ նույն միտքն արտահայտեց նաեւ Արդուլա Գյուլը՝ այցելելով Անի:

– Սակայն պետք է նշել նաեւ, որ եկեղեցիները մզկիթի վերածելու քաղաքականությունը ներկայումս չի շարունակվում, այդ քաղաքականությունը վերջացավ:

– Պարոն էրսոյ, շատերը գիտեն, որ, օրինակ, թուրքերեն լեզվի բարենորոգման հարցում մեծ դեր ունեցած Զակոբ Մարթայանը, որին Աթաթուրքը շնորհել է Դիլաչար ազգանունը, հայ է, սակայն նրա բոլոր գրքերի վրա գրված է միայն անվան առաջին տառը, քանի որ Զակոբ անունից հստակ կերեւա, որ նա հայ է: Կամ թուրքիայի խորհրդանիշներից մեկը՝ առաջին կին օդաչու եւ Աթաթուրքի հոգեզավակ Սաբիհա Գյոքչենը, պարզվեց, իրականում հայուհի է, եւ երբ Զրանտ Դինքը գրեց այդ մասին, նրա իրական հալածանքներն այդ ժամանակվանից սկսվեցին: Սա ե՞ւս մի բարդույթ է:

– Սաբիհա Գյոքչենի իրական ծագումն ի հայտ գալուց հետո ասես մի խորհրդանիշ կոտրվեց. եթե նա չերթեզ աղջիկ լիներ, խնդիր չէր լինի,

ուրիշ ազգից լինել, էլի խնդիր չէր լինի, սակայն ոչ մուսուլման, հայ կամ հույն լինելը լուրջ պրոբլեմ է, որովհետև նրանք հասարակությունից մեկուսացված են, խորթացված, նրանք ազգային խորհրդանիշ չեն կարող լինել:

*– Վերադառնանք համշենցիների խնդրին: Ըստ ձեզ, համշենցիների վրա որքա՞ն է իսլամի ազդեցությունը. ինչպես հայտնի է, նրանց մեջ պահպանվել են քրիստոնեական եւ մինչքրիստոնեական հայկական հավատքի որոշ տարրեր, օրինակ՝ Վարդավառ, Տրընդեզ եւ այլն:*

– Այո, ես մի ուսումնասիրություն եմ կատարել, որպեսզի պարզեմ, թե համշենցիներն ինչ աստիճանի են կրոնասեր: Մի պատմություն պատմեմ, որը շատ լավ, դիպուկ ներկայացնում է խնդիրը: Օրինակ՝ համշենցիները սպիրտային խմիչքներ, հայիոյանք շատ գործածող, կին տղամարդ իրար հետ հորոն (պար) պարող մարդիկ են, եւ այս ամենը մուսուլման հոգեւորականների կողմից դրական չի ընդունվում, որոնք փորձում են արգելել դրանք՝ հայտարարելով, թե, օրինակ, հորոն պարելը մեղք է: Ես մի պատմություն էի լսել, որ Չամշենի գյուղերից մեկում մի երիտասարդ իմամ էր նշանակվել, եւ նա թույլ չէր տվել, որ աղջիկ եւ տղա երեխաները միասին հաճախեն Ղուրանի դասընթացների՝ պահանջելով առանձնացնել նրանց: Այդ դեպքից հետո ամբողջ գյուղը ոտքի էր կանգնել դրա դեմ՝ ասելով, թե ինչպես կարելի է երեխաներին առանձնացնել, չէ՞ որ նրանց մեծ մասն ազգական են՝ հորեղբոր, հորաքրոջ երեխաներ: Ի վերջո, այդ իմամին վռնդել են գյուղից: Ես սկզբում սրան չհավատացի: Սակայն մի օր Չոփայի ճանապարհին պատահաբար ծանոթացա մի հոգեւորականի հետ, իմ կողքն էր նստել, զրույցի բռնվեցինք, եւ ես ասացի, որ աշխատում եմ այդ տարածքներում, հետազոտական, դաշտային աշխատանքներ եմ կատարում, այցելում եմ տարբեր գյուղեր: Խոսքի մեջ ասացի նաեւ իմամի հետ կապված պատմության մասին. մեծ էր իմ զարմանքը, երբ մարդը խոստովանեց, որ հենց ինքն է եղել այն իմամը, որին վռնդել են: Ասաց նաեւ, որ այդ գյուղացիները շատ լավ մարդիկ են, սակայն կին եւ տղամարդ իրար ձեռք բռնած պարում են, ինքն էլ ասել է, որ դա մեղք է, սակայն բանի տեղ չեն դրել, այնուհետեւ Ղուրանի դասընթացների հետ կապված՝ փորձել է երեխաներին ըստ սեռերի բաժանել, ու դրանից հետո գյուղացիներն ասել են՝ «դու արդեն շատ ես համը հանում» և վռնդել են գյուղից: Այսինքն՝ շատ աշխարհիկ են ապրում: Ծիշտ է նաեւ, որ համշենցիները քիչ են հաճախում մզկիթներ:

*– Պարոն Էրսոյ, կցանկանայի իմանալ Ձեր կարծիքը համշենցիների մեջ գոյություն ունեցող ներքին ամուսնությունների մասին:*

– Ասեմ, որ գյուղերում շարունակվում են ներքին ամուսնությունները, սակայն համշենցիների շրջանում ընդհանրապես երեւոյթը պակասում է, սրան զուգահեռ՝ աճում է ոչ համշենցիների հետ ամուսնությունների թիվը: Հիմնական պատճառներից է այն, որ ավելի շատ համշենցիներ են քաղաքաբնակ դառնում: Տեղափոխվելով մեծ քաղաքներ՝ շատ համշենցիներ օտարանում են կամ խորթանում իրենց հողերից, կտրվում կամ թուլանում է կապը համշենական շրջապատի հետ: Ես մարդկանց եմ ճանաչում, որ համշենցի են, սակայն նրանց լեզվում ո՛չ համշենական առոգանությունը կա, ո՛չ երբեւէ տեսել են Համշենը եւ ո՛չ էլ կապ ունեն համշենցիների հետ: Այսինքն՝ քաղաքաբնակ համշենցիների երկրորդ, երրորդ սերունդներ կան, որոնք ավելի խորթացած են: Ավելորդ է ասել, որ նմանատիպ համշենցիների մոտ չեն պահպանվում նաեւ ներքին ամուսնությունները:

## **ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ**

***Արաքս Փաշայան***

*Իսլամական կրոնաքաղաքական հոսանքները, այդ թվում՝ սուննի իսլամի առավել արմատական ուղղություն համարվող սալաֆիականությունը (որ հաճախ անվանվում է վահաբականություն եզրով), Ադրբեջան է ներթափանցել 1990-ականների սկզբներից, հիմնականում ռուս-չեչենական պատերազմների, նաեւ՝ սաուդյան միսիոներների քարոզչության արդյունքում՝ աստիճանաբար վերածելով ներքին վտանգի: Վերջին շրջանում Ադրբեջանի ներքաղաքական գործընթացներում որոշակի լարվածություն է առաջացրել «Անտառային եղբայրներ» անունով սալաֆիական մի խմբավորում:*

Իր բնույթով «Անտառային եղբայրները» ջանաա է, որն իսլամում ունի ինչպես համայնքի, այնպես էլ ենթակառուցվածքներ եւ միասնական առաջնորդ (էմիր) ունեցող ռազմական խմբավորման նշանակություն: Նման կառույցն առաջնորդվում է ռազմական ջիհադի հայեցակարգով, նրա գաղափարախոսության հիմքում ընկած է շարիաթական պետության ստեղծման սկզբունքը:

«Անտառային եղբայրների» կազմում (որն ունի հյուսիսկովկասյան ծագում) ներգրավված են չեչեններ, արաբ-աֆղանցիներ, դաղստանցիներ եւ ադրբեջանցիներ: Գործում է հիմնականում Դաղստանի հարավային եւ Ադրբեջանի հյուսիսային՝ մեծ մասամբ լեզգիաբնակ շրջաններում: Կառույցի անդամները կապ ունեն չեչենական եւ դաղստանյան ջիհադական շարժման հետ: Նրա մի շարք անդամներ մարտնչել են ծագումով լակ դաշտային հրամանատար Ռաբանի Խալիլովի հետ, ով մինչեւ իր մահը (2007թ.) հայտնի է եղել որպես «Կովկասի դիմադրության ուժերի դաղստանյան ճակատի էմիր» եւ 1999-ից Դաղստանում՝ Խատտաբի հրամանատարությամբ կռվել է ռուսական բանակի դեմ:

«Անտառային եղբայրների» մարտավարությունը փոխառված է դաղստանյան ջանաաններից, որոնք իրենց հերթին կրում են աֆղանական ջիհադական շարժման եւ մոջահիդների ազդեցությունը: Այդ ինստիտուտը (որն աֆղանական պատերազմի ժամանակ ներդրվել է ամերիկյան եւ



սառույան հատուկ ծառայությունների կողմից) հետազայում իր դրսեւորումներն ունեցավ Լեռնային Ղարաբաղի, Չեչնիայի եւ Բոսնիայի պատերազմներում:

Հատկանշական է, որ կառույցի անդամները Դաղստանից պարբերաբար անարգել կարողացել են ներթափանցել Ադրբեջան եւ իրականացնել տարաբնույթ գործողություններ: Խմբավորման հանգուցային դեմքերից էին Ջաբաթալայից ծագումով լեզգի, դաղստանյան ջամաայի առաջնորդ էմիր Իլդար (Էլդար) Մոլլաչիելը (Աբդուլմաջիդ մականունով), նաեւ նրա բարեկամ Սամիր Մեհտիելը (Մուլեյման մականունով):

Դեռեւս 2007-ին Ադրբեջանի իշխանությունները Սոււմգայիթում ձերբակալեցին «Անտառային եղբայրների» 17 ակտիվիստների, այդ թվում խմբավորման առաջնորդներից մեկին՝ ծագումով արաբ, Սառույան Արաբիայի քաղաքացի Նաիֆ Աբդ Ալ-Քերիմ Ալ-Բադավիին (Աբու Ջաֆար մականունով): Դրանից հետո Մոլլաչիելը եւ Մեհտիելը փորձել էին վերականգնել կառույցի գործունեությունը եւ երկրում իրականացնել ահաբեկչական գործողություններ:

Յուլիսին նրանք Դաղստանից անցել էին Ադրբեջան, ծրագրել ստեղծել «Սոււմգայիթ ջամաան» (որը պետք է Բաքվում կողոպուտների արդյունքում ձեռք բերեր զինամթերք եւ իրականացներ ռազմական գործողություններ), ինչպես նաեւ՝ «Ղուփա-Քուսար ջամաան», որը երկրի լեզգիաբնակ լեռնային շրջաններում պետք է հիմներ ռազմական հենակետեր եւ զինանոցներ: Նրանց էական օգնություն են ցույց տվել նաեւ տեղացի առանձին ադրբեջանցիներ:

Ըստ ադրբեջանական պաշտոնական տվյալների՝ 2008թ. օգոստոսի 17-ին երկրում նախահազահական ընտրությունների նախօրեին Բաքվի սոււննիական Աբու Բաքր մզկիթում իրականացված աննախադեպ ահաբեկչությունը կազմակերպել էին «Անտառային եղբայրները», իսկ ավելի ստույգ՝ Ի.Մոլլաչիելի խումբը: Մզկիթում իրականացված պայթյունից հետո, օգոստոսի վերջին, խմբավորումը ռազմական գործողություններ է իրականացրել արդեն Ադրբեջանի իրավապահ ուժերի դեմ՝ Քուսարի շրջանի Յեզրե գյուղի մոտակայքում եւ հաջողել նահանջել. արդյունքում՝ սպանվել է ադրբեջանցի մի զինվորական: Ըստ ադրբեջանական պաշտոնական տվյալների՝ իրավապահ ուժերը պայքարել են «վահաբական զինված խմբավորումների դեմ, ովքեր ձգտում են ապակայունացնել իրավիճակը տարածաշրջանում եւ արդյունքում՝ Յյուսիսային ու Հարավային Կովկասում ստեղծել իսլամական պետություն»:

Սեպտեմբերի 7-ին Ռուսաստանի եւ Ադրբեջանի անվտանգության ուժերին հաջողվեց Դաղստանում վերացնել Մոլլաչիելին, իսկ դրանից

հետո Ադրբեջանի իշխանություններն իրականացրին «Անտառային եղբայրների» զանգվածային ձերբակալություններ:

Հատկանշական է, որ Մոլլաշիեի սպանությունից եւ կառույցի բազմաթիվ անդամների ձերբակալությունից հետո «Անտառային եղբայրներն» Ադրբեջանի տարածքում ոչ միայն նահանջ չապրեցին, այլեւ ընդլայնեցին իրենց գործունեությունը: Ասվածի ապացույցն է հերթական՝ այս անգամ նոյեմբերի 10-ին եւ դրան հաջորդած օրերին կառույցի անդամների եւ Ադրբեջանի պաշտպանական ուժերի միջեւ ռազմական գործողությունների ծավալումը Քուսարի եւ Ղուփայի շրջաններում: Նոյեմբերի 11-ին ռազմական գործողությունների փաստը հերքեց երկրի ՆԳՆ մամուլի ծառայությունը՝ հյուսիսային շրջաններում ներքին գործերի տեղաշարժը կապելով հերթական գորավարժությունների հետ: Սակայն նոյեմբերի 10-ին ադրբեջանական APA գործակալությունն արդեն իսկ հայտնել էր, որ նոյեմբերի 9-ից ադրբեջանական ներքին գործերը զինամթերքի որոնման նպատակով շարժվում են դեպի Քուսարի եւ Ղուփայի լեռնային ու անտառային շրջաններ: Առկա տվյալները հիմք են տալիս արձանագրել, որ գրոհայիններին հաջողվել է մի քանի օր դիմադրություն ցույց տալ ադրբեջանական ներքին գործերին: Մամուլում տեղ գտած նյութերից պարզ է դառնում, որ Բաքվի իշխանությունները ռազմական գործողությունների գոտի են տեղափոխել ծանր զրահատեխնիկա: Չի բացառվում, որ գրոհայինների թիվը քիչ չի եղել, որոնք, ամենայն հավանականությամբ, ցանկացել են ցուցադրական ռազմական ակցիա իրականացնել, քանի որ խմբավորման ղեկավարները հազիվ թե համոզված լինեին, թե կարող են հասնել քաղաքական որեւէ լուրջ նպատակի:

Ադրբեջանում «Անտառային եղբայրների» գործունեությունը, ըստ ամենայնի, եզրեր ունի նաեւ լեզգիական գործոնի հետ: Հայտնի է, որ լեզգիները, որոնք պատմական Աղվանքի (Կովկասյան Ալբանիա) հնագույն ժողովուրդներից մեկն են, բաժանված են երկու հատվածների: Նրանց մի մասն ապրում է Դաղստանում, մյուս մասը՝ Ադրբեջանի հյուսիսային եւ հյուսիսարեւմտյան շրջաններում<sup>1</sup>: Լեզգիները, որոնք դավանում են իսլամի սուննի ուղղությունը, մեծ մասամբ բնակվում են Քուսարում, Խաչմազում, Ղուփայում, Ջաքաթալայում, Իսմայիլիում, նաեւ՝ Բաքվի մերձակայքում: Քուսարի շրջանում լեզգիները կազմում են բնակչության 90-95 տոկոսը:

Չնայած ադրբեջանական իշխանություններին (մասնավորապես Հեյդար Ալիևի օրոք) հաջողվեց ժամանակի ընթացքում չեզոքացնել լեզգիական ազգայնական շարժումը եւ դրա առաջատարը համարվող «Սադվալ» կազմակերպությանը (որը 1990-ականներից ի վեր պայքարում

եր սկզբում՝ Դադստանի եւ Ադրբեջանի տարածքներում լեզգիական ինքնավարությունների, իսկ ապա՝ անկախ Լեզգիստան պետության ստեղծման համար), սակայն այսօր էլ լեզգիական քաղաքական օրակարգը չի կորցրել նշանակությունը: Հատկանշական է, որ ժամանակի ընթացքում լեզգիական ազգային գործընթացում որոշակի նշանակություն սկսեց ձեռք բերել նոր բաղադրիչ՝ իսլամը: Դեռեւս 1990-ականներից լեզգիական շրջաններում զգալի տարածում ստացան իսլամական կրոնաքաղաքական գաղափարները: Արդյունքում՝ լեզգիական ազգային տարածքներում բնակչության մի հատված դարձավ սուննի կրոնական գործառույթի ակտիվ հետեւորդ: Լեզգի բազմաթիվ երիտասարդներ սկսեցին անդամագրվել տարաբնույթ ջանաաներում, որոնք գործում էին Չեչնիայում եւ Դադստանում:

Ադրբեջանի իշխանությունները մինչ օրս լեզգիական խնդրի լուծումը տեսնում են ուժային մեթոդների մեջ: Ասվածի ապացույցն է լեզգիական շրջաններում ժամանակ առ ժամանակ կրոնական գործիչների, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների, լրագրողների, մտավորականների ձերբակալությունների փաստը: Լեզգի հասարակական-քաղաքական գործիչներն ադրբեջանական իշխանություններին, որպես կանոն, մեղադրում են մայրենի լեզուն սովորելու հետ կապված անհաղթահարելի դժվարությունների եւ լեզգիական շրջաններում սոցիալական տարաբնույթ խնդիրների առկայության մեջ: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում 2008թ. հունիսին Ադրբեջանի լեզգիների, ավարների եւ ծախուրների միացյալ հայտարարությունը, որն ունի «Ադրբեջանական պետական ֆաշիզմի դեմ» խորագիրը (դրանում Ադրբեջանի լեզգիների, ավարների եւ ծախուրների միացյալ թիվը ներկայացված է մեկ միլիոն): Հայտարարության մեջ Ադրբեջանում ապրող ազգային փոքրամասնությունները միջազգային հանրությանը զգուշացնում են էթնիկ զտման եւ բռնի տեղահանման վտանգի մասին: Որպես ապացույց բերվում է Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի ժամանակ տասնյակ հազարավոր լեզգի, ավար եւ ծախուր երիտասարդների բռնի կերպով ռազմաճակատ ուղարկվելու փաստը:

Ադրբեջանի իշխանությունների նկատմամբ եղած դժգոհությունը պայմանավորված է նաեւ այն հանգամանքով, որ լեզգիները հիմնականում սուննի ինքնության կրողներ են, ի տարբերություն շիա ադրբեջանցիների: Պատահական չէ, որ սուննիական կրոնաքաղաքական ուժերը, որոնք շիաների նկատմամբ ավանդականորեն վերապահ կեցվածք ունեն, կարողանում են համակրանք շահել հենց այդ շրջաններում: Միջազգային հարաբերությունների եւ անվտանգության խնդիրներով զբաղվող շվեյցա-

րական տեղեկատվական-վերլուծական կենտրոնի (ISN) աշխատակից Կարլ Ռահդերի համոզմամբ՝ պատահական չէ, որ ռուսական բանակի հետապնդումներից խուսափող չեչեններն ու դադատանցիներն Ադրբեջանի հյուսիսային շրջաններում «զգում են իրենց ինչպես տանը»: Նրանք լսարան են գտնում Ղուփայի եւ Ջաքաթալայի սուննի մզկիթներում: Այս շրջաններում է, որ ժամանակ առ ժամանակ զենք է հայտնաբերվում կամ տեղական ոստիկանության հետ բախումներ են արձանագրվում:

Պատահական չէ, որ «Անտառային եղբայրները» ծրագրել էին հենց լեզգիական շրջաններում ստեղծել ռազմական ճամբարներ: Չի բացառվում, որ Մոլլաչիեղը ցանկանում էր, որպեսզի սույն խմբավորումը դառնա ինքնուրույն ջամաա՝ Յյուսիսային Կովկասի դիմադրության շարժման մեջ ներքաշելով լեզգիների, ովքեր իրենց գործունեությունը կկարողանային ուղղորդել նաեւ Բաքվի դեմ՝ հետամուտ լինելով լեզգիական հիմնախնդիրների լուծմանը:

Ադրբեջանին սպառնացող վտանգների մեջ կրոնական եւ էթնիկ բաղադրիչները մեծապես խոցելի են դարձնում այդ երկիրը: Առանձին տվյալներ փաստում են, որ իսլամական կրոնական արմատականությունը թափանցել է նաեւ ադրբեջանական բանակ, որի ապացույցը 2007թ. աշնանը Ադրբեջանում ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի դեսպանատների դեմ ծրագրված ահաբեկչության բացահայտումն էր, որը փորձել է իրականացնել վահաբական մի խմբավորում՝ ի դեմս Պաշտպանության նախարարության լեյտենանտ Ք.Ասադովի, ով առեւանգված զենքն ու զինամթերքը թաքցրել էր լեզգիաբնակ Իսմայիլիի շրջանում:

Ադրբեջանի ներքաղաքական գործընթացներում կրոնական եւ էթնիկ գործոնի ակտիվացումը կարող է պայմանավորված լինել նաեւ արտաքին դերակատարությամբ: Դրանով կարող են հետաքրքրված լինել տարածաշրջանի աշխարհաքաղաքական բոլոր խաղացողները: Ոմանք կարող են եզրակացնել, որ Ադրբեջանում իսլամական կրոնաքաղաքական հոսանքների ակտիվացումը Ռուսաստանի նախաձեռնությունն է: Համարվում է նաեւ, որ Ռուսաստանը լեզգիական գործոնն օգտագործում է իր կովկասյան քաղաքականության մեջ: Չի բացառվում, որ Ռուսաստանը, խոցելի դարձնելով Ադրբեջանը, ձգտում է վերահսկողություն ունենալ տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսների վրա: Այն, որ «Անտառային եղբայրների» գրոհայինները կարողացել են անարգել ներթափանցել Ադրբեջան, խոսում է այն մասին, որ մի կողմից՝ այդ իրողությունը չնկատելու է տրվել ռուսական սահմանապահ ուժերի եւ հատուկ ծառայությունների կողմից, մյուս կողմից՝ չպետք է բացառել, որ Ռուսաստանն իր հերթին խնդիր ունի վերահսկել նախ՝ Դադատանում սալաֆիական կառույցների գործունեութ-

յունը, ապա՝ ռուս-ադրբեջանական սահմանը, չնայած այն հանգամանքին, որ 1996թ. Ադրբեջանի հետ ձեռք է բերվել երկուստեք սահմանն ամրապնդելու պայմանավորվածություն, որն ամրագրվել է համապատասխան պայմանագրով:

Ադրբեջանում իսլամական գործոնի ակտիվացումը կարելի է դիտարկել նաև որպես իսլամական կրոնաքաղաքական արմատական կառույցների միջոցով շրջանն ապակայունացնելու եւ այնտեղ լայն ազդեցություն ունեցող Ռուսաստանի դիրքերը թուլացնելու ձգտում, որին հետամուտ է Արեւմուտքը:

Միեւնույն ժամանակ, փաստը, որ վերջին տարիների ընթացքում սա «Անտառային եղբայրների» հետ կապված բազմաթիվ դեպքերից մեկն է միայն, խոսում է այն մասին, որ իսլամական արմատականությունը դառնում է Ադրբեջանին առնչվող անվտանգության օրակարգի բաղկացուցիչը, եւ չի բացառվում, որ առաջիկայում այդ ուղղությամբ նոր զարգացումներ լինեն:

---

<sup>1</sup> Ըստ ադրբեջանական պաշտոնական տվյալների՝ լեզգիները երկրի բնակչության 2-2,5 տոկոսն են: 1999թ. մարդահամարի տվյալներով՝ նրանց թիվը 178.000 էր: Լեզգիական աղբյուրներով՝ Ադրբեջանում բնակվում է 500.000-700.000 լեզգի բնակչություն: Ադրբեջանցի ուսումնասիրող Արիֆ Յունուսովի հանոզմամբ՝ Ադրբեջանի լեզգիների թիվը 250.000-260.000-ի շրջանակներում է: Ըստ ՄԱԿ-ի մարդու իրավունքների բարձրագույն հանձնաժողովի (UNHCHR) 2006թ. զեկույցի (Minorities in the North Caucasus)՝ Բաքվի արվարձաններում լեզգիները բնակչության 15 տոկոսն են, իսկ Բաքվում գործում է հին լեզգիական մզկիթը:

## **ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

2008թ. հոկտեմբերի 15-ին Իրանի հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեին հայտարարեց, որ աշխարհում ծավալված միջազգային ֆինանսական ճգնաժամն ազդարարում է «կապիտալիզմի մահը»: Խամենեիի հայտարարությունից մեկ օր առաջ արդեն Իրանի նախագահը նշել էր, որ ֆինանսական ճգնաժամը կհանգեցնի ամերիկյան հեգեմոնիայի ավարտին: Չնայած այսպիսի գնահատականներին, ֆինանսական ճգնաժամը եւ նավթի անկումն ապրող գները կարող են լուրջ մարտահրավեր նետել հենց Իրանի Իսլամական Հանրապետությանը: Հաջորդ լուրջ մարտահրավերները, որոնց հետ կարող է բախվել Թեհրանը, անկայունության աճն է տարածաշրջանում եւ սեփական «միջուկային դոսյեի» լուծման ձգձգումը:

### **Նավթի գների անկումը**

Իրանի պետական բյուջեի շահութային մասի 85 տոկոսն ապահովվում է նավթային սեկտորի կողմից: Նավթի ներկայիս գները, որոնք տատանվում են 40-50 ԱՄՆ դոլարի շրջանակներում, կարող են բերել Իսլամական հանրապետության մակրոտնտեսական անվտանգության խափանմանը, եթե, իհարկե, այդ գները պահպանվեն նաեւ հաջորդ տարվա ընթացքում: Հոկտեմբերի 11-ին Իրանի Կենտրոնական բանկի ղեկավարը կարծիք հայտնեց, որ եթե առաջիկայում էական փոփոխություններ չլինեն նավթի գների հետ կապված, երկիրը կկանգնի լրջագույն հիմնախնդիրների առաջ: Իսկ նոյեմբերի 15-ին Իրանի նախկին նախագահ Ա.Ա. Հաշեմի-Ռաֆսանջանին, հավանաբար իր քննադատությունն ուղղելով Մ.Ահմադինեժադի հասցեին, հայտարարեց. «Մենք չպետք է մտածենք, որ աշխարհը կլանած ֆինանսական ճգնաժամը մեր շահերի օգտին է եւ ուրախանանք: Նավթի գների անկումը առաջնային սպառնալիք է մեզ համար»:

Հիմնական գործոններից մեկը, որը կարող է օգնել Իրանին նավթի գների անկման հետեւանքով առաջ եկող հիմնախնդիրներին որոշակիորեն դիմակայելու գործում, կարող է համարվել վերջին տարիների ընթացքում նավթի բարձր գների շնորհիվ առաջացած գերեկամուտների կուտակումը: Այս տարվա ամռանն, Արեւմուտքի հետ հարաբերությունների վատթարացման եւ պատժամիջոցների կիրառման սպառնալիքի առկայու-

թյան պատճառով, Իրանի նախագահի հրամանով իրանական պետական բանկերը եւ ֆինանսների նախարարությունը եվրոպական բանկերից դուրս են բերել մոտավորապես 50 մլրդ ԱՄՆ դոլարի հասնող ներդրումները, վաճառել եվրոպական արժեթղթերը. այս քայլերի արդյունքում առաջացած գումարները ներդրվել են բուն իրանական բանկային ակտիվներում:

Այս գումարները կառավարությանը հնարավորություն կտան կարճաժամկետ հեռանկարում կայունացնել մակրոտնտեսական իրավիճակը երկրում եւ ապահովել պետական բյուջեի սոցիալական ծախսերի հատվածի համեմատաբար լիարժեք կատարումը: Սակայն միջնաժամկետ եւ առավել եւս՝ երկարաժամկետ կտրվածքում Թեհրանն իր վրա կկրի միջազգային ֆինանսական ճգնաժամի ողջ ազդեցությունը:

### **Միջուկային հիմնախնդիրը**

Նավթի գների անկումը համաշխարհային շուկայում Իրանի համար պարունակում է եւս մեկ վտանգ. ՄԱԿ ԱԽ-ը ավելի ազատ կարող է գտնվել Իրանի դեմ լուրջ պատժամիջոցներ կիրառելու տեսանկյունից: Վերջին երկու տարիների ընթացքում ԱՄՆ-ը միջազգային հանրությանը ներկայացնում էր իրանական նավթի ներկրումը սահմանափակող պատժամիջոցներ կիրառելու պահանջ: Սակայն Վաշինգտոնի այս պահանջը հիմնականում քարոզչական նշանակություն ուներ, քանի որ նավթի բարձր գների պայմաններում նման պատժամիջոցները կարող էին բերել էներգակիրների գնի հերթական աճի, որը լուրջ վտանգ էր ներկայացնում հենց Արեւմուտքի համար: Ըստ որոշ վերլուծաբանների՝ նավթի բարձր գները միջազգային ֆինանսական ճգնաժամի առաջացման հիմնական պատճառներից են: Այսօր, սակայն, երբ նվազում է նավթի համաշխարհային սպառումը եւ գների զգալի իջեցում է արձանագրվել, պատժամիջոցներն Իրանի նավթային սեկտորի նկատմամբ համաշխարհային տնտեսական կայունության վրա մեծ ազդեցություն չեն կարող ունենալ:

Նույնը կարելի է ասել նաեւ Իրանի նկատմամբ հնարավոր ռազմական գործողության կիրառման վերաբերյալ, որի հետեւանքները համաշխարհային տնտեսական համակարգի համար խիստ էական չեն կարող լինել: Չնայած Վաշինգտոնում նոր վարչակազմի հաստատումից հետո Իրանի հետ ռազմական ընդհարման հնարավորությունը զգալիորեն նվազել է, Նահանգներում քիչ չեն այն ազդեցիկ վերլուծաբանները, որոնք ռազմական հարվածը Իրանի նկատմամբ համարում են միջուկային հիմնախնդրի լուծման միակ տարբերակը: Այս տեսակետն էր հիմնականում գերիշխում դեկտեմբերի 3-ին Վաշինգտոնում կայացած մի շարք վերլուծական

կենտրոնների ներկայացուցիչների մասնակցությամբ Իրանի միջուկային հիմնախնդրին նվիրված քննարկումներում: Օրինակ, ՄԱԿ ԱԽ-ում նախկին դեսպան Ջ.Բոլթոնը հայտարարեց. «Պատժամիջոցների եւ բանակցությունների ժամանակն անցել է: Միակ բանը, որ մեզ մնում է՝ ռազմական հարվածն է»: Ըստ Բոլթոնի, այն պետք է իրականացվի մինչև հունվարի 20-ը, քանի դեռ նախագահի պաշտոնը չի ստանձնել Բ.Օբաման:

Միևնույն ժամանակ, նոյեմբերի վերջին երկու ազդեցիկ ամերիկյան «ուղեղային կենտրոններ»՝ Բրուքինգսի ինստիտուտը եւ Միջազգային հարաբերությունների խորհուրդը, հանրությանը ներկայացրին Ս.Թեյլթթի եւ Ռ.Յասսի համատեղ ղեկավարությամբ աշխատող փորձագետների պատրաստած «Վերականգնելով հավասարակշռությունը. հաջորդ նախագահի ռազմավարությունը Մերձավոր Արեւելքում» զեկույցը: ԱՄՆ հաջորդ նախագահին առաջարկվում է Իրանի հետ հարաբերությունները կառուցել այն սկզբունքով, որը Ռ.Նիքսոնը կիրառեց Չինաստանի նկատմամբ. ճանաչել Իրանի առաջատար դերը, կարգավորել հարաբերությունները եւ համատեղ պայքարել ընդհանուր սպառնալիքների դեմ: Ջեկույցից պարզ չէ, սակայն, թե ինչպես պետք է լուծվի իրանական միջուկային ծրագրի հիմնախնդիրը:

Կասկածելի է թվում, որ Վաշինգտոնի հետ հարաբերությունների կարգավորման դեպքում անգամ Իրանը հրաժարվի միջուկային զենքի ստեղծման ծրագրերից: Մանավանդ հաշվի առնելով այն բացասական զարգացումները, որոնք տեղ են գտել հարեւան Պակիստանում: Այս երկրում իշխանությունը զավթելու մեծ հնարավորություններ ունեն ծայրահեղական իսլամիստները, որոնց գաղափարախոսության հիմնական մասերից է շիականության դեմ պայքարը: Պետական համակարգի կիսախարխուլ պայմաններում ծայրահեղականների հաղթանակը Պակիստանում առավել քան հնարավոր է, իսկ սա նշանակում է, որ միջուկային զենքի ստեղծումն Իրանի համար առավել քան հրատապ է: Առանց նման զենքի առկայության անհնար է պահպանել հավասարակշռությունը Պակիստանի հետ:

Իրանի միջուկային հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ որոշակի ճգնաժամ է ապրում նաեւ ԱԵՄԳ քաղաքականությունը: Դեկտեմբերի 8-ին ԱԵՄԳ գլխավոր քարտուղար Մ. Էլ-Բարադեյը «Los Angeles Times» թերթին տված հարցազրույցում Իրանի միջուկային հիմնախնդրի շուրջ ընթացող գործընթացների վերաբերյալ նշեց. «Մեր քաղաքականությունը ծախսողվել է: Մենք անգամ մեկ սանտիմետր առաջ չենք գնացել հարցի կարգավորման ուղղությամբ»: Ներկայումս, ըստ Էլ-Բարադեյի, շատ բան կախված է նրանից, թե արդյոք Վաշինգտոնը կգնա ուղղակի բանակցությունների թեհրանի հետ:



Ամենայն հավանականությամբ, հիմնախնդրի կարգավորման շուրջ գործընթացները կակտիվանան միայն Բ.Օբամայի՝ նախագահական լիազորություններն ստանձնելուց հետո:

### **Ներքին զարգացումներ**

Միջազգային ֆինանսական ճգնաժամն իր ազդեցությունը կունենա նաեւ կես տարի հետո Իրանում անցկացվելիք նախագահական ընտրությունների վրա: Սոցիալական ոլորտում սպասվող խնդիրները, որոնք անպայմանորեն կառաջանան նավթի գների անկման հետեւանքով կրճատվող պետական եկամուտների պատճառով, կարող են լուրջ հարված հասցնել գործող նախագահ Մ.Ահմադինեժադի հեղինակությանը հասարակության շրջանում: Նշենք, որ չնայած լուրջ ֆինանսական հիմնախնդիրներին, Մ.Ահմադինեժադի տնտեսական եւ սոցիալական ծրագրերը գալիք տարվա համար բավական խոշոր են եւ մեծ գումարներ են պահանջում:

Բյուջեի քննարկումներն Իրանի խորհրդարանում, որոնք կավարտվեն մինչեւ հունվարի վերջը, կարող են լուրջ հակասություններ ստեղծել նախագահի եւ քաղաքական, հոգեւոր շրջանակների միջեւ: Քիչ չեն կարծիքներն այն մասին, թե նախագահի ծրագրերի զգալի մասը պոպուլիստական է՝ ուղղված կարճաժամկետ հեռանկարում հասարակության մեջ Մ.Ահմադինեժադի հեղինակության պահպանմանը: Իր հերթին, նախկին նախագահ Ա.Ա. Չաշեմի-Ռաֆսանջանին, որը ղեկավարում է Ընդունվող որոշումների նպատակահարմարության խորհուրդը, կոչ է արել խորհրդարանին մանրակրկիտ զննել ներկայացված ծրագրերը, քանի որ դրանք ընդունելը կամ չընդունելը երկրի համար հղի է լուրջ տնտեսական հետեւանքներով: Չաշեմի-Ռաֆսանջանի կոչը վերաբերում էր ոչ միայն բյուջեի վերջնական քննարկումներին, այլեւ մեկ այլ խոշոր նախագծի, որը ցանկանում է իրականացնել կառավարությունը: Այն վերաբերում է պետական արդյունաբերական հզորությունների մասնավորեցմանը, որի անհրաժեշտության մասին բազմիցս հայտարարել է գործող նախագահը: Մասնավորեցման գործընթացն իր հերթին նոր հակասություններ է ստեղծում իշխանական համակարգի տարբեր թեւերի միջեւ եւ հիմք ստեղծում քաղաքական պայքարի հետագա թեժացման համար:

Կարելի է սպասել, որ առաջիկա մեկ-երկու ամիսներին ներքաղաքական զարգացումներն Իրանում ակնհայտորեն նոր թափ կստանան, ինչն անմիջականորեն կազդի գալիք նախագահական ընտրությունների վրա:

## **ԷՆԵՐԳԵՏԻԿ ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ**

### ***Սարգիս Հարությունյան***

Դեկտեմբերի 14-ին Թուրքմենստանում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Իրադարձությունն իր վրա ուշադրություն գրավեց ոչ այն պատճառով, որ հնարավոր էր համարվում անակնկալ ինչ-որ զարգացում. աչքի զարնեց այն հանգամանքը, որ Թուրքմենստանի անկախությունից ի վեր առաջին անգամ պաշտոնական Ազգաբաղը որոշեց հրավիրել արեւմտյան դիտորդների: Անշուշտ, Բերդիմուհամեդովի վարչակազմի այդ քայլը նշան է, թե Ազգաբաղում ցանկանում են մերձենալ Արեւմուտքին, սակայն եթե հաշվի առնենք, որ`

❖ դիտորդներին ուղղված հրավերը Թուրքմենստանի նախագահի կողմից հնչեցվեց նոյեմբերի 14-ին Գերմանիայի կանցլեր Մերկելի հետ բանակցություններից անմիջապես հետո,

❖ եւ որ այդ բանակցություններում գլխավոր կետը վերաբերում էր թուրքմենական գազին,

ապա հավանական է ներկայանում այն տարբերակը, որ բեռլինյան բանակցություններում, այնուամենայնիվ, որոշակի արդյունք է գրանցվել:

Հստակ է մի բան` այսօր թուրքմենական գործող վարչակազմը Արեւմուտքին մոտեցնող միակ միջոցը կարող են լինել էներգետիկ պայմանավորվածությունները:

### **Իրավիճակային վերլուծություն**

Նոյեմբերի 14-ին Նիցցում կայացած Եվրամիություն–Ռուսաստան գազաթափողովի նախօրեին Եվրոպական միության գործադիր բարձրագույն մարմինը` Եվրահանձնաժողովը, հրապարակեց Միության էներգետիկ ռազմավարությանն առնչվող փաստաթուղթ` «Energy Security and Solidarity Action Plan» («Էներգետիկ անվտանգության եւ համերաշխության գործողությունների ծրագիր»): Համաձայն այդ փաստաթղթի, ներկայում Եվրամիությունը ներկրում է բնական գազի իր պահանջարկի 61%-ը, ընդ որում` ներկրված կապույտ վառելիքի 42%-ը, նավթի մոտ 35%-ը եւ ածխի շուրջ 25%-ը գալիս է Ռուսաստանից:

Սակայն էլ ավելի կարելու է ներկայացված դիմամիկան, համաձայն

որի՝ 2030թ. Եվրամիությունը ներկրելու է բնական գազի իր պահանջարկի 84%-ը: Ըստ նույն այդ փաստաթղթի, նման հեռանկարի պայմաններում սեփական էներգետիկ անվտանգությունն ուժեղացնելու համար Բրյուսելը պատրաստվում է 2020-2050թթ. ընթացքում ծախսել հսկայական գումար՝ 2 տրլն եվրո: Ի շարս այլ նախաձեռնությունների, Եվրոպական միությունը մտադիր է իրականացնել «The Southern Gas Corridor» («Չարավային գազային միջանցք») նախագիծը<sup>1</sup>, իսկ արդեն 2009թ. հիմնել «Caspian Development Corporation» ընկերությունը, որը միավորելով եվրոպական խոշորագույն հինգ կամ վեց ընկերությունների՝ պետք է Կասպյան ավազանից գնի, տեղափոխի ու եվրոպական շուկայում վաճառի տարեկան 60 մլրդ-ից մինչև 120 մլրդ մ<sup>3</sup> բնական գազ կամ ԵՄ ներկայիս պահանջարկի 12%-ից 25%-ը:

Անշուշտ, գոյություն ունի նաև հարցի այլ կողմը: Փաստն այն է, որ Եվրոպական միության համար դժվար է իրականացնել միասնական էներգետիկ ռազմավարություն: Ռուսաստանը Գերմանիային կապող «Nord Stream» գազամուղի շուրջ առկա հայտնի տարածայնությունները դրա վառ օրինակն են: Իսկ մյուս կողմից՝ Միության միասնական արտաքին ու անվտանգության քաղաքականության (Common Foreign and Security Policy/CFSP) փաստացի բացակայությունը էական խոչընդոտ է հանդիսանում, առանց որի բավական բարդ է պատկերացնել ԵՄ միասնական էներգետիկ ռազմավարության կյանքի կոչումը: Սակայն արդեն այսօր գոյություն ունեն առնվազն երկու գործոններ, որոնք ի վիճակի են հիմք ստեղծել ԵՄ էներգետիկ ռազմավարության իրականացման համար.

❖ Չնայած միջազգային ֆինանսական ճգնաժամի հետեւանքով նավթի գները շարունակում են ընկնել, սակայն պարզ է, որ ավելի երկարատեւ հեռանկարում էներգակիրների գները միայն աճելու են՝ կապված նաև մոլորակում նավթի ու բնական գազի պաշարների սպառման հետ: Բացի այդ, արեւմտյան գրեթե բոլոր առաջատար հետազոտական կենտրոնների գնահատականների համաձայն, աշխարհի զարգացած տնտեսությունները դժվար թե հասցնեն տեխնոլոգիական այնպիսի թռիչք կատարել, որ մինչև 2025-2030թթ. ի վիճակի լինեն գոնե էապես կրճատել սեփական տնտեսությունների կախվածությունը նավթից, բնական գազից եւ ածխից:

❖ Մյուս կարեւոր գործոնը բնական գազի միջազգային շուկայում կարտելային այնպիսի միության ի հայտ գալու հավանականությունն է, որը կարող է միայնակ ձեւավորել բնական գազի միջազգային գինը: Եթե դեկտեմբերի 23-ին Մոսկվայում նախատեսված «գազային OPEC»-ի

ստեղծումը՝ Ռուսաստանի, Իրանի, Կատարի<sup>2</sup> (ու չի բացառվում նաև բնական գազ արդյունահանող այլ պետությունների) մասնակցությամբ իրոք վերածվի գազային կազմակերպության, եւ եթե այդ միության անդամ երկրները կարողանան փոխհամաձայնության գալ կապույտ վառելիքի միջազգային գնի ձեւավորման մեխանիզմի շուրջ, ապա գազի միջազգային շուկայում մենք կունենանք սկզբունքային այլ իրավիճակ<sup>3</sup>:

Այս պայմաններում է, որ վերջին շրջանում թուրքմենական գազի շուրջ տեղի են ունենում բավական ուշագրավ զարգացումներ:

Հայտնի է, որ ս.թ. հոկտեմբերի 14-ին բրիտանական «Gaffney, Cline & Associates Ltd.» ընկերությունը հրապարակեց թուրքմենական բնական գազի հանքերի իր կողմից իրականացված աուդիտի արդյունքները<sup>4</sup>: Համաձայն այդ հրապարակման, Թուրքմենստանի բնական գազի ընդհանուր պաշարները գնահատվեցին ավելի քան 27.67 տրլն մ<sup>3</sup>: Եթե բրիտանական այդ ընկերության ներկայացրած տվյալները համապատասխանում են իրականությանը, ապա Թուրքմենստանը դառնում է աշխարհում բնական գազի ամենամեծ պաշարներն ունեցող երկրորդ երկիրը՝ Ռուսաստանից հետո:

<b>Բնական գազի ամենամեծ պաշարներն ունեցող առաջին հինգ երկրները<sup>5</sup></b>		
<i>Երկիրը</i>	<i>պաշարները (տրլն մ<sup>3</sup>)</i>	<i>չափաբաժինը (%) մոլորակի ընդհանուր պաշարների մեջ</i>
Ռուսաստան	44.60	22.07
Թուրքմենստան	27.67	13.69
Իրան	27.58	13.65
Կատար	25.64	12.69
Սաուդյան Արաբիա	7.07	3.50

Այդ հրապարակումից ուղիղ մեկ ամիս անց՝ նոյեմբերի 14-ին, Բեռլինում տեղի ունեցան Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի եւ Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի բանակցությունները: Բանակցությունների արդյունքների հայտնի մասն այն է, որ թուրքմեն առաջնորդը խոստացավ Մերկելին պաշտոնապես հաստատել «Gaffney, Cline & Associates Ltd.»-ի հրապարակած տվյալները:

Դեկտեմբերի 2-ին Եվրահանձնաժողովը սկսեց Թուրքմենստանի հետ առեւտրային ժամանակավոր պայմանագրի ստորագրումը նախապատրաստող գործընթացը, ինչը հնարավորություն կտա Ազգաբաղի հետ պայմանավորվել այդ թվում էներգետիկ ոլորտում: Ուշագրավ է, որ տարիներ շարունակ Եվրոպական միությունը ձեռնպահ էր մնում այդ

քայլից՝ պատճառաբանելով, թե Թուրքմենստանում ոտնահարվում են մարդու իրավունքները:

Եվ վերջապես, պետք է նույն տրամաբանության ներքո դասել նոյեմբերի 29-ին Թուրքմենբաշի նավահանգստային քաղաքում տեղի ունեցած Բերդիմուհամեդովի եւ Թուրքիայի ու Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպումը: Թեեւ բանակցությունների օրակարգի եւ արդյունքների մասին պաշտոնական որեւէ լուրջ հրապարակում չեղավ, սակայն առանձնապես չթաքցվեց էլ, որ քննարկված հիմնական կետը վերաբերել է անդրկասպյան գազամուղի կառուցմանը, որը Ադրբեջանի, Վրաստանի ու Թուրքիայի տարածքով թուրքմենական գազը պետք է հասցնի Եվրոպա: Մյուս կողմից, նման մակարդակով բանակցությունների անցկացման փաստը վկայում է, որ այդ գաղափարը զոհնեց նախնական հավանության է արժանացել երեք նախագահների կողմից<sup>6</sup>:

### **Հետևություններ**

Անշուշտ, ներկայացվածը չի կարող միանշանակ հետևության հիմք հանդիսանալ, թե Եվրամիության կամ առավել եւս Միացյալ Նահանգների ու Ազգաբաղի միջեւ գազային ոլորտում ռազմավարական նշանակության պայմանավորվածություն է հասունացել: Այդ իմաստով գրեթե արքիտոն է այն ձեւակերպումը, թե էներգետիկ քաղաքականությունը սկսում է գործել միայն այն ժամանակ, երբ առկա է էներգակիրների տեղափոխման ճանապարհը: Բայց արդեն այսօր հստակ են մի քանի կետեր.

- ❖ Միջազգային պրակտիկայում գազահանքերի աուդիտը (հատկապես՝ նման խոշոր աուդիտը) միշտ էլ նախորդել է պայմանագրերի կնքմանը: Այլ հարց է աուդիտի արդյունքների հրապարակման եւ պայմանագրերի կնքման ժամանակահատվածի տեւողությունը:

- ❖ Քաղաքական տեսանկյունից Ազգաբաղի որոշումը՝ հրապարակել նման կարգի տեղեկություն, պետք է ընկալել որպես հայտ՝ նոր դերակատարությամբ հանդես գալու միջազգային էներգետիկ շուկայում: Որովհետեւ այս պարագայում առաջնային է դառնում ոչ թե Թուրքմենստանի բնական գազի իրական պաշարների հարցը, այլ այն թիվը, որը ներկայացվում է: Այդ առումով իրավիճակը կարող է նմանվել Ադրբեջանի նավթային բումին նախորդող ժամանակահատվածին:

- ❖ Այդ պարագայում, հարցը չի կարող փակվել բնական գազի միջազգային շուկայում Թուրքմենստանի սոսկ զբաղեցրած դիրքի փոփոխությամբ: Թուրքմենստանի բնական գազի պաշարների նման կտրուկ աճն իր հետ կրերի ոչ միայն շոշափելի տեղաշարժեր տարածաշրջանային

ու միջազգային էներգետիկ պատկերում, այլև կարող է հանգեցնել աշխարհաքաղաքական հետեւանքների:

❖ Մյուս կողմից, նման քանակությամբ բնական գազի պաշարների մասին հրապարակումը նաեւ յուրահատուկ մեսիջ է Մոսկվային, թե Ազգաբաղն ունի ավելի շատ կապույտ վառելիք, քան պարտավոր է վաճառել «Газпром»-ին: Այսինքն՝ ռուսական կողմի համար անակնկալ չպետք է լինի, եթե Թուրքմենստանը որոշի իր բնական գազը միջազգային շուկա արտահանել նաեւ այլ ուղիներով:

❖ Իսկ եթե դա այդպես է, ապա ավելի հավանական է, որ նորություններ մենք կլսենք հենց արեւմտյան ուղղությունից: Որ այդ նորությունները դժվար թե առնչվեն չինական ուղղությանը, վկայում է այն հանգամանքը, որ Կենտրոնական Ասիան Չինաստանին կապող նավթամուղի ու գազամուղի շինարարություններն ավարտական փուլում են: Յետեւաբար, միակ տարբերակը մնում է արեւմտյան ուղղությունը: Այլ հարց է, թե ի վերջո որ ճանապարհը կընտրվի՝ ադրբեջանական<sup>1</sup>, իրանական<sup>2</sup>, թե՞ երկուսը միասին:

❖ Եվ վերջապես, եթե Թուրքմենստան–Ադրբեջան–Վրաստան–Թուրքիա գազամուղն իրականություն դառնա, ապա այն ի վիճակի է իր ներգործությունն ունենալ հարավկովկասյան աշխարհաքաղաքական զարգացումների վրա: Միաժամանակ, նման գազամուղի առկայությունը բացասաբար է անդրադառնալու վերջին շրջանում ջերմացում ապրող ռուս-թուրքական եւ ռուս-ադրբեջանական հարաբերությունների վրա:

---

<sup>1</sup> Նշված նախագծի շրջանակներում պետք է ներառվի նաեւ «Nabucco» գազամուղի կառուցումը, որի շինարարության սկիզբը 2009-ից տեղափոխվել է 2010թ.՝ կապված միջազգային ֆինանսական ճգնաժամի հետ, եւ որը վերջնականապես պատրաստ պետք է լինի 2018թ.՝ տարեկան Իրանից ու Կասպիցից եվրոպա տեղափոխելով մինչեւ 31 մլրդ մ<sup>3</sup> բնական գազ:

<sup>2</sup> «BP Statistical Review of World Energy, June 2008» զեկույցի համաձայն, այսօր նշված երեք երկրները տիրապետում են աշխարհի բնական գազի պաշարների ավելի քան 55%-ին:

<sup>3</sup> Այն, որ «գազային OPEC»-ի շուրջ ընթացող գործընթացները կրում են լուրջ բնույթ կամ զոնն այդպես են ընկալվում եվրամիությունում, վկայում է «The Financial Times Deutschland»-ի նոյեմբերի 16-ի հրապարակումը, ըստ որի՝ գազի ոլորտի եվրոպական խոշորագույն ընկերություններից «E.ON»-ը, «Gaz de

France»-ը եւ «RWE»-ն պատրաստվում են կազմել բնական գազի գնորդների կարտել՝ ի պատասխան Ռուսաստանի, Իրանի, Կատարի կողմից «գազային OPEC»-ի ստեղծման ծրագրի:

<sup>4</sup> Թուրքմենստանում միջազգային որեւէ ընկերության կողմից նման աուդիտ չէր անցկացվել Ազգաբաղի անկախանալուց ի վեր:

<sup>5</sup> Թուրքմենստանի վերաբերյալ տվյալները ներկայացված են՝ հիմք ընդունելով «Gaffney, Cline & Associates Ltd.» ընկերության նշված հրապարակումը, իսկ մնացած երկրների համար օգտագործվել է «British Petroleum» ընկերության կողմից պատրաստված «BP Statistical Review of World Energy, June 2008» զեկույցը: Ի դեպ, այդ զեկույցը Թուրքմենստանի բնական գազի պաշարները գնահատում է ընդամենը 2.67 տրլն մ<sup>3</sup>:

<sup>6</sup> Այստեղ կարելուր է ավելացնել, որ երեք նախագահների հանդիպումը տեղի ունեցավ հոկտեմբերի 3-ին Ազգաբաղ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի այցելությունից հետո:

## « ԶՈՒՆՈՂՈՍՈՐ »-Ը ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ Սուրեն Մանուկյան

*Նոյեմբերի 17-22-ը Ուկրաինայում անցկացվեցին միջոցառումներ՝ նվիրված հոլոգոմորի 75-ամյակին:*

*Հոլոգոմոր (սովասպանություն կամ սովասպանդ) են անվանում 1932-1933թթ. ԽՍՀՄ մի շարք շրջաններում տեղի ունեցած զանգվածային սովը, որը շատերը համարում են արհեստականորեն կազմակերպված եւ միջազգային հանրությունից պահանջում ընդունել այն որպես ուկրաինական ժողովրդի ցեղասպանություն:*

*Նոյեմբերի 23-ին Զոմմի պապ Բենեդիկտոս XVI-ը Վատիկանի Սուրբ Պետրոսի հրապարակում իր կիրակնօրյա հայրապետական խոսքում հատուկ նշեց հոլոգոմորի զոհերի հիշատակը:*

### **Չարցի պատմությունը**

Խորհրդային գյուղի 1932-1933թթ. սովը անցած դարի պատմության ամենաողբերգական էջերից է: Այդ տարիներին ԽՍՀՄ-ում սովից զոհվեց տարբեր տվյալներով 4-ից 7,5 մլն մարդ: Ուկրաինայի տարածքում զոհերի թիվը կազմեց մոտ 2,2 մլն:

Խորհրդային Միությունում սա փակ թեմա էր: Օրինակ, 1933թ. արգելվում էր մահվան պատճառ նշել «սովը», այն փոխարինվում էր կամ «հյուժվածություն», կամ էլ «մահվան պատճառն անհայտ է» գրություններով: Սովի մասին տեղեկությունների տարածումը խորհրդային ղեկավարությունը համարում էր «վնասակար գործունեություն» եւ դրա համար խիստ պատժում:

Ի հեճուկս դրա, թեման 30-ականներից միշտ էլ օգտագործվել է Արեւմուտքում՝ հակախորհրդային հայտարարությունների եւ գործողությունների համար: Ուկրաինայում սովի մասին առաջին հրապարակումները հայտնվեցին նացիստական Գերմանիայում, դրանք հիմնականում նպատակ ունեին վարկաբեկել Խորհրդային Միությունը: Գերմանիան նույնիսկ փորձեց «ԽՍՀՄ-ում սովի» հարցը փոխանցել Ազգերի լիգա, որը, սակայն, որոշում կայացրեց, որ դա քաղաքական հարց է եւ գերմանական հայցը փոխանցեց Կարմիր խաչին:



Ձանգվածային սովի թեման ավելի ակտիվ շրջանառության մեջ դրվեց 70-ականների վերջից ԱՄՆ-ում եւ Կանադայում, դրա բացահայտման գործում առաջնային դեր խաղաց այս երկրների ուկրաինական համայնքը: 80-ականների սկզբին մեծ արձագանք ստացան Մեծ սովի 50-ամյակին նվիրված միջոցառումները:

1984թ. պարզ դարձավ, որ ԱՄՆ կառավարությունը մտադիր է սովի հիմնահարցին միջազգային հնչեղություն տալ: ԱՄՆ Սենատը եւ Ներկայացուցիչների պալատը օրինագիծ եւ երկու բանաձեւ մշակեցին 1932-1933թթ. սովի թեմայով: Ստեղծվեց նույնիսկ հատուկ հանձնաժողով՝ մի շարք կոնգրեսականների մասնակցությամբ եւ Ջեյմս Մեյսի գլխավորությամբ: Հանձնաժողովի հետաքննության եզրակացությունը սպասելի էր՝ «հոլոդոմորի զոհերը սովահարությամբ միտումնավոր մահվան են հասցվել», սակայն այն չէր բացահայտել ուկրաինացիներին ոչնչացնելու նախապես գոյություն ունեցող ծրագիր: Հանձնաժողովի աշխատանքի արդյունքները բացասաբար ընդունվեցին նաեւ պրոֆեսիոնալ պատմաբանների շրջանում: Մեյսը, օրինակ, բողոքում էր, որ նրա առջեւ փակվեցին բոլոր ակադեմիական հիմնարկների դռները:

Առաջին հուշահամալիրը, որը նվիրված էր «Մոսկվայի խորհրդային վարչակարգի կողմից կազմակերպված սով-գեոցիդին», բացվեց 1983թ. Կանադայում:

ԽՍՀՄ-ում քննարկումներ սկսվեցին վերակառուցման տարիներին, երբ բացվեց արխիվների մի մասը եւ պարզ դարձան տեղի ունեցածի իրական չափերը: 1987թ. դեկտեմբերի 25-ին Ուկրաինայի կոմկուսի առաջին քարտուղար Վ.Շչերբիցկին առաջին անգամ պաշտոնապես հիշատակեց 1932-1933թթ. սովը Ուկրաինայում: Շեշտվեցին այդ մեծ ողբերգության պատճառները, հավելվեց նաեւ, որ խորհրդային իշխանություններն ամեն ինչ արեցին իրավիճակը փրկելու համար:

1988թ. փետրվարի 18-ին «Լիտերատուրնայա Ուկրաինա» թերթում Ա.Մուսիենկոն առաջին անգամ շրջանառության մեջ դրեց «հոլոդոմոր» բառը՝ օգտագործելով 1932-1933թթ. սովի մասին ԱՄՆ-ում ուկրաինական համայնքների կողմից հաճախ օգտագործվող «հոլոդամորդ» (սպանություն սովի միջոցով) տերմինը:

90-ականների կեսերից հոլոդոմոր բառը հետզհետե մտավ միջազգային փաստաթղթերի մեջ:

2005 թվականից Ուկրաինայի կառավարությունը հոլոդոմորը ուկրաինական ժողովրդի ցեղասպանություն ճանաչելու քաղաքականություն է վարում: Ամեն տարի նոյեմբերի վերջին շաբաթվա ընթացքում անց են կացվում նրա զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ: Ամբողջ

աշխարհով մեկ կազմակերպվում են ցուցադրություններ եւ դասախոսություններ: Մի շարք պետություններ (ԱՄՆ-ը, Ավստրալիան, Իտալիան, Լեհաստանը, Իսպանիան, Բրազիլիան, Արգենտինան եւ Կանադան) հոլոդոմորը ցեղասպանական գործողություն են ճանաչել:

Ուկրաինայում աշխատում է հատուկ գիտահետազոտական հաստատություն՝ Ազգային հիշողության ուկրաինական ինստիտուտը, որի հիմնական առաքելությունն է այս հարցի լուսաբանումը:

### **Պատմության գնահատում**

1932-1933թթ. ԽՍՀՄ մի շարք շրջաններում սարսափելի սով տարածվեց:

Գիտնականների մի մասը (նրանց մեջ ամենահեղինակավորը ամերիկացի պատմաբան Ռոբերտ Կոնքվեստն է) համոզված է, որ պատճառները եղել են համատարած կուլեկտիվացումը, կուլակաթափությունը, երկրի հյուսիսային եւ արեւելյան շրջաններ ունեւոր գյուղացիների տեղափոխումը, հացի պահեստավորման միանգամայն անիրագործելի ծրագրերը եւ ուկրաինական բնակավայրերը բանակի միջոցով շրջափակելը, սովյալների ելքն արգելափակելը: Հետեւաբար, ըստ այս տեսակետի, Ուկրաինայի բնակչության զանգվածային մահը հիմնականում խորհրդային ղեկավարության գիտակցված եւ նպատակաուղղված գործողությունների հետեւանք է:

Սրան գումարվում է նաեւ այն գաղտնիությունը, որով պատված էր ուկրաինական ողբերգությունը՝ ԽՍՀՄ մյուս շրջաններում դրա մասին շատ քչերը գիտեին: Ուկրաինայից ուղարկվող նամակները բռնագրավվում էին գրաքննության կողմից:

30-ականների սովն ուսումնասիրող շվեդական գիտնական Լենարտ Սամուելսոնը կարծում է, որ երկրում միանշանակ կար բերքի պակաս, սակայն դա չէր սովի հիմնական պատճառը: Ստալինը համոզված էր, որ վիճակն օրհասական չէ, եւ գյուղացիներն ուղղակի պահում են հացը: Նույնիսկ երբ պարզ դարձավ աղետի չափը, իրավիճակը կարելի էր փրկել՝ կանգնեցնելով մի քանի խոշոր շինարարական նախագիծ եւ ընդունելով, որ երկրում սով է: Այս պարագայում ԽՍՀՄ-ը կարող էր օգնություն ստանալ: Պատմաբան Վիկտոր Կոնդրաշովը նշում է, որ 1933թ. ԽՍՀՄ-ը արտահանել է 18 միլիոն ցեմտներ հացահատիկ, որով կարելի էր կերակրել մոտ 7 միլիոն մարդ: Բացի այդ, կար նաեւ անձեռնմխելի ֆոնդը՝ 18,2 միլիոն ցեմտներ: Սակայն օգնություն չխնդրեցին, անձեռնմխելի ֆոնդին ձեռք չտվեցին, իսկ արտահանումից չիրաժարվեցին, քանի որ դա

կնշանակեր ընդունել սեփական պարտությունը, ընդունել, որ կոլեկտիվացման գործընթացն անհաջողության է մատնվել: Ստալինը դա չէր կարող թույլ տալ:

Այս վարկածն ունի նաեւ քաղաքական բաղադրիչ: Ժամանակակից ուկրաինական քաղաքական էլիտայի զգալի հատվածը, ինչպես նաեւ ուկրաինական սփյուռքի աջակցությամբ հրատարակված աշխատանքների մեծ մասը Մեծ սովի կազմակերպման նպատակ է համարում ուկրաինական ազգային ինքնության ոչնչացումը՝ «հանգստացում սովի միջոցով»: Ըստ այդմ, այն տարիներին Ուկրաինայում բավական տարածված էին անկախական տրամադրությունները, եւ ստալինյան գյուղական քաղաքականությանն ամենաուժեղ դիմադրությունը հենց Ուկրաինայում էր, իսկ ուկրաինական գյուղացին ազգային ինքնության ամենազխալիոր կրողն էր: Չափազանցություն կլիներ պնդել, որ Ուկրաինայում հեղափոխություն էր նախապատրաստվում, սակայն Մոսկվայում իրոք որոշակի անհանգստություն կար ոչ ռուսական ազգային ամենամեծ միավորի անհնազանդության վերաբերյալ, եւ ստալինյան վարչակարգը նախահարձակ գործողություններ էր իրականացնում ուկրաինական գյուղի դեմ՝ այն քողարկելով ուկրաինական հակահեղափոխության դեմ պայքարով: 1932թ. օգոստոսի 11-ին Ստալինը գրում է իր հայտնի նամակը Կազանովիչին. «Ամենակարեւորը հիմա Ուկրաինան է, որտեղ գործերը վատ են եւ կուսակցական գծով, եւ խորհրդային... Եթե մենք հիմա չզբաղվենք Ուկրաինայում իրավիճակը շտկելով, ապա Ուկրաինան կարող ենք կորցնել»: Հետեւաբար, ասվում է, որ հոլոդոմորը նախահարձակ պատժիչ գործողություն էր՝ ուղղված հենց ուկրաինական ազգի դեմ, քանի որ նրա վերածնունդը վտանգ էր ներկայացնում խորհրդային կայսրության միասնությանը եւ զոյությանը: Այս գործողության ընթացքում արհեստականորեն կազմակերպված սովի միջոցով ջախջախիչ հարված էր հասցվել ուկրաինական գյուղացիությանը՝ ազգի հիմնական մասը ֆիզիկապես ոչնչացնելու եւ, հետեւաբար, դիմադրության ներուժը խարխլելու նպատակով:

Այս տեսակետը միանշանակ չի ընդունում հենց ուկրաինական հասարակությունը: Օրինակ, ուկրաինական կոմունիստների շրջանում, Ղրիմում կամ Երկրի արեւելյան հատվածում հոլոդոմորի թեման համարում են հանրային գիտակցության մանիպուլացում, «հարվարդյան հատուկ նախագիծ, որը ստեղծվել էր ԽՍՀՄ-ի, իսկ հետո նաեւ Ռուսաստանի դեմ տեղեկատվական-հոգեբանական դիվերսիա իրականացնելու համար»:

2003թ. ՄԱԿ-ում ընդունվեց «ուկրաինական ժողովրդի ողբերգության եւ միլիոնավոր ռուսների, ղազախների ու Պոլովիեիում, Յյուսիսային

Կովկասում, Ղազախստանում եւ ԽՍՀՄ ուրիշ շրջաններում սովից մահացած այլ ազգությունների ներկայացուցիչների հիշատակի» մասին 36 պետությունների (այդ թվում նաեւ Ռուսաստանի) համատեղ հայտարարությունը:

2008թ. պատրաստված բանաձեւն ավելի կոշտ բնորոշումներ ունի: Նրա սկզբնական տարբերակում կար հոլոդոմորի բնորոշումն իբրեւ ցեղասպանություն, նոր խմբագրման մեջ պահպանվել է միայն հոլոդոմոր անվանումը, սակայն դա ոչ մի բան չի փոխում: Ուկրաինային բավարարում է միջազգային հանրության կողմից գոնե հոլոդոմորի ճանաչումը, իսկ հոլոդոմորի ամբողջական վերծանումը իբրեւ ցեղասպանություն արդեն կա Ուկրաինայի ներքին օրենսդրությունում: Բանաձեւը նախատեսվում էր քննարկման դնել մինչեւ նոյեմբերի 22-ը, սակայն այն հետաձգվեց, քանի որ կասկածներ կային քննարկման բարենպաստ ելքի վերաբերյալ, իսկ դա կարող էր ստվերել 75-ամյակի միջոցառումները:

### **Ռուսական կարծիք**

Հոլոդոմորի ճանաչման ուղղությամբ տարվող հետեւողական եւ շարունակական աշխատանքը դարձավ նաեւ ռուս-ուկրաինական հարաբերությունների սրման պատճառ: Թեեւ ուկրաինացիներն ուղղակի չեն մեղադրում ռուսներին ցեղասպանության իրականացման մեջ, սակայն անուղղակի կերպով մատնանշում են Ռուսաստանը՝ իբրեւ ԽՍՀՄ իրավահաջորդ:

Սա ակնհայտ կերպով նյարդայնացնում է ռուսներին եւ ստիպում նրանց պաշտպանվել ու մշտապես ներքաշվել հոլոդոմորի շուրջ տեղեկատվական պատերազմների մեջ:

«Ուկրաինայում տեղի ունեցած սովի եւ Ռուսաստանում ու ԽՍՀՄ այլ շրջաններում տեղի ունեցած սովի միջեւ ինչ-որ «որակական տարբերությունների» մասին մտորումները, մեր կարծիքով, ուղղակի ցիմիկ եւ անբարոյական են», – գրեց ՌԴ նախագահ Դ.Մեդվեդեւը Ուկրաինայի նախագահ Վ.Յուշչենկոյին, բացատրելով, թե ինչու հնարավոր չի համարում իր մասնակցությունն Ուկրաինայում նշվող «հոլոդոմորի» 75-ամյակի կապակցությամբ անցկացվող միջոցառումներին:

Ռուսական պատմաբանները եւ նրանց համակարծիք այլազգի գիտնականները Մեծ սովի պատճառ համարում են երաշտը, ցածր բերքատվությունը, սխալ ագրարային քաղաքականությունը, 1920-1930-ականների արմատական տնտեսական բարեփոխումների, մասնավորապես՝ կոլեկտիվացման իրականացման չնախատեսված հետեւանքները: Նրանք

մերժում են սովի կազմակերպված եւ բացառապես ուկրաինացիների դեմ ուղղված լինելը: Սովից մահանում էին ոչ միայն Ուկրաինայում, եւ այդ առումով, չի կարելի խոսել զանգվածային սովի մասին՝ իբրեւ հենց ուկրաինական ազգի դեմ ձեռնարկված գործողության:

1933թ. սկզբին սննդամատակարարման իրավիճակը չափազանց ծանր էր նույնիսկ Սոսվայում եւ Լենինգրադում կամ Կարմիր բանակում: Սովյալ էին Արեւմտյան Սիբիրը, Ուրալը, Միջին եւ Ստորին Վոլգան, Կենտրոնական Սեւահողային գոտին: Սով էր նույնիսկ Արեւմտյան Ուկրաինայում, թեւեւ այդ տարիներին այն Լեհաստանի մաս էր: Սակայն իրավիճակն Ուկրաինայում, Հյուսիսային Կովկասում եւ Ղազախստանում ամենածանրն էր, որն իր հետ բերեց համաճարակներ եւ զանգվածային սովամահություն:

### **Ինքնության կառուցում**

Շատերը կարծում են, թե հոլոդոմորի հարցը բարձրացվեց ռուս-ուկրաինական հարաբերությունների ծայրաստիճան սրմանը զուգահեռ: Եվ պատմության մութ էջերը եւս մեկ անգամ դարձան այն հարթակը, որտեղ բացահայտվում են խոր պահված եւ գուցե մինչեւ վերջ չգիտակցված ատելության եւ թշնամանքի հիմքերը:

Սակայն, ամենայն հավանականությամբ, այս քաղաքականության հիմքերն այլ են.

1. Ըստ մի շարք տեսակետների, հոլոդոմորը կարող է լինել այն միավորող գաղափարը, որը կհամախմբի մասնատված Ուկրաինան: Ընդ որում, այդ համախմբումը տեղի կունենա ոչ միայն ողբերգության հիմքի վրա, այլ նաեւ հերոսացման, քանի որ մահացածները, ըստ նոր առասպելի, նահատակվել են այն պատճառով, որ ուկրաինացի էին եւ ձգտում էին անկախության: Ֆրանսիական գիտնական Ալան Բեզանսոնը համեմատում է դա հրեական եւ հայկական դեպքերի հետ, երբ ցեղասպանությունը դարձավ ազգային ինքնության, ազգային միասնության կարելու առանցք:

2. Սա կարող է լինել նաեւ շատ գործուն միջոց «նոր ուկրաինացի» կերտելու համար: Դեպի Եվրամիություն եւ ՆԱՏՕ ձգտող Ուկրաինայի նոր արտաքին քաղաքականությունը չի համընկնում երկրի դեռեւս ռուսամետ բնակչության մեծ մասի ցանկությունների հետ: Այս զգացումները փոխելու համար անհրաժեշտ է ռուսական կերպարի մեջ թշնամու տարրեր ներմուծել: Ռուսները ներկայացվում են իբրեւ մի ազգ, որը սովասպան է կազմակերպել: Ըստ ՄԱԿ-ում ՌԴ մշտական ներկայացուցչի տեղակալ Իլյա Ռոզաչովի, սա կլինի հզոր հոգեբանական գործոն, որը կարող է

համակրանքով Արեւելքին նայող բնակչության մեծ մասին շրջել դեպի Արեւմուտք:

3. Բացի այդ, հոլոդոմորի թեման կարող է համախմբել ամբողջ աշխարհի ուկրաինացիներին: ԱՄՆ-ի, Կանադայի եւ Արգենտինայի ուկրաինական համայնքները, որոնք զգալի քաղաքական եւ ֆինանսական ազդեցություն ունեն, հնարավոր է՝ սկսեն ներդրումներ անել Ուկրաինայի տնտեսության մեջ:

4. Այս թեման, որպես կանոն, արծարծվում է ԱՄՆ եւ Մեծ Բրիտանիայի ջանքերով, քանի որ այն բորբոքում եւ նյարդայնացնում է Ռուսաստանին, իսկ ջղաձգում եւ արդարացում պահանջող թեմաների գործոնը միշտ մեծ դեր է խաղում անգլոսաքսոնական քաղաքականության մեջ:

Եվ հենց այս պատճառներով է, որ ըստ 30-ականների սովն ուսումնասիրող շվեդական գիտնական Լենարտ Սամուելսոնի՝ ուկրաինացիներն ընդլայնում են «ցեղասպանություն» հասկացությունը՝ նրա մեջ ներդնելով այնպիսի բնորոշումներ, որոնք չկան ՄԱԿ կոնվենցիայում:

## **Իգոր Պանարին. «ԱՄԵՐԻԿԱՆ ԱՅԼԵՎՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՉԻ ԼԻՆԻ»**

**Իգոր Պանարին** – քաղաքագիտության դոկտոր, ՌԴ ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիայի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան:

**Ֆարց** – Իգոր Նիկոլաևիչ, որտեղի՞ց Ձեզ մոտ ծագեց ԱՄՆ-ի փլուզման գաղափարը՝ այն էլ 1998թ., երբ այդ երկիրը ծաղկում էր եւ անվերապահորեն համաշխարհային առաջատարն էր:

**Պատ.**– Արդեն այն ժամանակ պարզ էր, որ ԱՄՆ համար գլխավոր կործանիչ ուժը ֆինանսատնտեսականն է: Դոլարը ոչնչով ապահովված չէ: Երկրի արտաքին պարտքը սրընթաց աճել է, թեև 1980թ. այն բնավ էլ չկար: 1998թ., երբ ես իմ կանխատեսումն արեցի, այն գերազանցում էր երկու տրիլիոն դոլարը: Այժմ 11 տրիլիոնից ավելին է: Դա բուրգ է, որն անպայման կփլուզվի:

**Ֆարց** – Կփլուզվի ո՞րչ ամերիկյան տնտեսությունը:

**Պատ.**– Այն արդեն փլուզվում է: Ֆինանսական ճգնաժամը հանգեցրեց նրան, որ Ուոլ-սթրիթի հիմզ խոշորագույն ու հին դրամատներից երեքն այլևս դադարեցին գոյություն ունենալ, իսկ երկուսը գտնվում են գոյատևման եզրին: Նրանց կորուստները պատմության մեջ ամենամեծն են: Այժմ խոսքը կարգավորման համակարգի՝ գլոբալ ֆինանսական մասշտաբով փոփոխման մասին է. Ամերիկյան այլևս համաշխարհային կարգավորող չի լինի:

**Ֆարց** – Իսկ ո՞վ նրան կփոխարինի:

**Պատ.**– Այդ դերին հավակնում են երկու պետություն. Չինաստանն՝ իր վիթխարի պաշարներով եւ Ռուսաստանը՝ որպես երկիր, որը կարող է կարգավորող դեր խաղալ եվրասիական տարածքում: Վերջերս Վաշինգտոնում ավարտվեց «քսանի» գագաթաժողովը, ուր տեղի ունեցավ շատ ուշագրավ իրադարձություն: Մասնակիցներն առաջադրեցին միջազգային հարաբերությունների նոր ճարտարապետություն, որտեղ առանցքային

դերը պատկանելու է Արժույթի միջազգային հիմնադրամին: Սակայն վերջինս կարիք ունի ֆինանսների: Գազաթափողովի մասնակիցները գումարի տրամադրման խնդրանքով դիմեցին Չինաստանին ու ճապոնիային: Չինաստանի ոսկու եւ արժույթի պաշարները կազմում են երկու տրիլիոնից ավելի դոլար, նա ԱՄՆ խոշորագույն վարկատուն է եւ այժմ անխուսափելիորեն ազդելու է հիմնադրամի քաղաքականության վրա: Ի դեպ, պատահական չէր, որ գազաթափողվում պարոն Յու Ցզինթաոն հանդիպեց երկու առաջնորդների՝ ՌԴ նախագահի եւ Մեծ Բրիտանիայի վարչապետի հետ: Զենց Անգլիայում է ենթադրվում անցկացնել «քսանի» գարնանային հանդիպումը: Իսկ Ռուսաստանի հետ հանդիպումը՝ որպես երկրի, որն առաջադրում է համաշխարհային ֆինանսական համակարգի վերակառուցման նոր սկզբունքներ, եւս հստակ տեղավորվում է չինական բարեփոխման գործընթացի մեջ:

*Չարդ* – Համաշխարհային առաջատարների հետ ամեն ինչ պարզ է: Սակայն վերադառնանք ԱՄՆ-ին: Ի՞նչն է վկայում այս երկրի հնարավոր պառակտման մասին:

*Պատ.* – Պատճառների մի ողջ համալիր: Առաջին. ֆինանսական խնդիրներն ԱՄՆ-ում սաստկանալու են: Այստեղ միլիոնավոր քաղաքացիներ զրկվել են իրենց խնայողություններից: Երկրում աճում են զներն ու գործազրկությունը: Կործանման եզրին են «Ձեներալ մոթորսը» եւ «Ֆորդը», իսկ դա նշանակում է, որ ամբողջ քաղաքներ կմնան առանց աշխատանքի: Նահանգապետներն արդեն դաշնային կենտրոնից կոշտ ձեւով փող են պահանջում: Աճում է դժգոհությունը. մինչեւ այժմ այն զսպում էին միայն ընտրություններն ու հույսը, թե Օբաման հրաշք կգործի: Բայց արդեն գարնանը պարզ կլինի, որ հրաշք չկա:

Երկրորդ գործոնը ԱՄՆ քաղաքական կառուցվածքի խոցելիությունն է: Երկրի տարածքում գոյություն չունի միասնական օրենսդրություն: Չկան անգամ ճանապարհային երթեւեկության ընդհանուր կանոններ: Զենքը, որը միավորում է ԱՄՆ-ին, բավական փխրուն է: Նույնիսկ Իրաքում զինված ուժերը հիմնականում ներկայացնում են ոչ ամերիկյան քաղաքացիները. նրանք կռվում են, որովհետեւ իրենց խոստանում են ամերիկյան քաղաքացիություն: Այսպիսով, բանակը, որպես ծուլման կաթսա, արդեն դադարել է կատարել ամերիկյան պետության ամրացման գործառույթը: Եվ, վերջապես, նաեւ վերնախավերի պառակտումը, ինչը ճգնաժամի պայմաններում վառ արտահայտվեց:



*Չարք* – Ինչպե՞ս է տրոհվելու երկիրը:

*Պատ.*– Ընդամենը վեց մասի: Առաջինը ԱՄՆ Խաղաղօվկիանոսյան ափն է: Այստեղ կարելի է մեկ օրինակ բերել. Սան Ֆրանցիսկոյի բնակչության 53 տոկոսը չինացիներ են: Վաշինգտոնի նահանգի նահանգապետն էթնիկ չինացի էր, նրա մայրաքաղաք Սիեթլը կոչում են ԱՄՆ-ում չինական ներգաղթի դարպաս: Խաղաղօվկիանոսյան ափը հետզհետե ընկնում է Չինաստանի ազդեցության տակ. դա ակնառու է: Երկրորդ մասը հարավն է, ուր մեքսիկացիներ են: Այնտեղ իսպաներենը որոշ տեղեր արդեն դարձել է պետական լեզու: Չետո Տեխասը, որը բացահայտ պայքարում է անկախության համար: ԱՄՆ Ատլանտիկական ափը ներկայացնում է միանգամայն այլ էթնոս ու հոգեմտածելակերպ, այն եւս կարելի է բաժանել երկու մասի: Եվ նաեւ կենտրոնական անկումային շրջանները: Ես հիշեցնեմ, որ ԱՄՆ հինգ կենտրոնական նահանգներ, ուր հնդկացիներ են ապրում, հայտարարել են իրենց անկախության մասին: Այն ընկավ վեց որպես կատակ, քաղաքական շոու: Սակայն փաստը մնում է փաստ: Չյուսիսում մեծ է Կանադայի ազդեցությունը: Այսպեւ, ի դեպ, կարող ենք մենք պահանջել: Չէ՞ որ այն տրվել է վարձակալության:

*Չարք* – Իսկ ի՞նչ է այդ դեպքում լինելու դոլարի հետ:

*Պատ.*– 2008թ. Կանադայի, Մեքսիկայի եւ ԱՄՆ-ի միջեւ ամերոյի՝ որպես նոր դրամական միավորի, ներդրման նախապատրաստման մասին գաղտնի համաձայնությունն ընդունվեց: Սա կարող է նշանակել դոլարի փոխարինման պատրաստություն: Ընդ որում, 100 դոլարանոց թղթադրամները, որոնք հեղեղել են աշխարհը, պարզապես կարող են «սառեցվել»: Ասենք՝ պատրվակով, թե ահաբեկիչները դրանք կեղծում են:

*Չարք* – Դուք խոսեցիք վերնախավերի պառակտման մասին: Դրանք դեմոկրատներն ու հանրապետականներն են:

*Պատ.*– Ամենեւին ոչ: ԱՄՆ ղեկավարությունում կա երկու խմբավորում: Առաջինին կարելի է կոչել «գլոբալիստներ» կամ «տրոցկիստներ»: Նրանց գաղափարը ժամանակին ձեւակերպել է Տրոցկին. «Մեզ պետք է ոչ թե Ռուսաստանը, այլ համաշխարհային հեղափոխություն»: Խորհրդային Ռուսաստանը նրանք դիտում էին որպես աշխարհը վերահսկելու հենակայան: Երկրորդ խմբավորումը պետականամետներն են, որոնք ցանկանում են իրենց երկրի բարգավաճումը: Այս երկու կլանների ներկայացուցիչները կան թե՛ դեմոկրատական, թե՛ հանրապետական կուսակցությունում:

*Չարք* – Իսկ ովքե՞ր են ղեկավարում կլանները:

*Պատ.*– Գլոբալիստների առանցքային դեմքերն են պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը եւ փոխնախագահ Ռիք Չեյնին: Պետականամետներինը՝ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը, ԿՅՎ տնօրեն Մայքլ Չայդենը եւ ազգային հետախուզության տնօրեն, ծովակալ Մայք Սակքոնելը: Գլոբալիստները հիմնականում ֆինանսական վերնախավն են, իսկ պետականամետները՝ զինված ուժերը, հատուկ ծառայությունները եւ ռազմարդյունաբերական համալիրը: Վերջին ժամանակներս այդ երկու կլանների միջեւ դիմակայությունը դարձել է բացահայտ: Անցյալ դեկտեմբերին պետականամետները հանդես եկան զեկույցով, որը լիովին բացառում էր Իրանում ռազմական միջուկային ծրագրի առկայությունը: Այն ուղղակիորեն հակասում էր Չեյնիի ու Ռայսի եզրակացություններին: Երկրորդ՝ անչափ կարեւոր իրադարձությունը տեղի ունեցավ հնգօրյա կովկասյան պատերազմի առիթով ԱՄՆ Կոնգրեսի լսումներում: Գլոբալիստները՝ ի դեմս Քոնդոլիզա Ռայսի, հաստատում էին, թե պատերազմը սկսել է Ռուսաստանը, եւ դրա համար նա կպատժվի: Վրաստանը Քոնդոլիզայի նախագիծն էր: Իսկ հետախուզական ընկերակցության ներկայացուցիչները հանդես եկան տրամագծորեն հակառակ հայտարարությամբ՝ որ պատերազմը սկսել է Վրաստանը: Առկա է շատ նշանավոր քաղաքական դեմքերի բացահայտ ընդհարում:

*Չարք* – Իսկ ո՞ւմ հետ է Օբաման:

*Պատ.*– Պետականամետները, Գեյթսի գլխավորությամբ, հիմնական խաղացողներն էին, որոնք Օբամային բերեցին հաղթանակի: Դրա փոխարեն նրանից պահանջում են գլխավոր ուղեգծի փոփոխում: Այդ իմաստով շատ հետաքրքիր է այն փաստը, որ հանրապետական Գեյթսը դիտվում է ԱՄՆ պաշտպանության նախարարի ամենահիմնական թեկնածուն (նա Օբամայի կողմից արդեն վերանշանակվել է այդ պաշտոնում – *խմբ.*): Դա նախագահի վրա պետականամետների ազդեցության հետեւանք է: Ի դեպ, իր առաջին խորհրդակցությունն Օբաման անցկացրել է հենց ամերիկյան հետախուզական ընկերակցության հետ:

*Չարք* – Ի՞նչ պիտի անի Ռուսաստանը, որպեսզի խուսափի ցնցումներից՝ կապված ԱՄՆ տնտեսական անկման հետ:

*Պատ.*– Ձարգացնել ռուբլին որպես տարածաշրջանային արժույթ: Ստեղծել լիարժեք նավթային բորսա, որն առեւտրային գործարքները կիրականացնի ռուբլով: Վերջերս Ռուսաստանի ու Բելառուսի միջեւ, ի վերջո, կնքվեց նավթի ու գազի դիմաց վճարումներում ռուբլու անցման մասին համաձայնագիր: Ղազախստանի եւ Բելառուսի հետ էլեկտրակա- նության դիմաց վճարումներում Ռուսաստանն արդեն անցել է սեփական արժույթին: Իսկ ներկայիս խնդիրն է՝ ջանալ 2009թ. համար հնարավորինս շատ պայմանագրեր կնքել ռուբլով: Այս դեպքում Ռուսաստանը կկարողանա խուսափել գլոբալ ճգնաժամից, որը սաստկանում է:

**«Новое русское слово», ԱՄՆ**

## **Հենրի Քիսինջեր. «ՎՄԵՐԻԿԱՆ ԿՅԱՂԹԱՀԱՐԻ ՃԳՆԱԺԱՍԸ»**

Նորընտիր նախագահ Բարաք Օբամայի վարչակազմում ազգային անվտանգության ոլորտի քաղաքականությամբ զբաղվելու է միանգամայն ոչ սովորական թիմ: Առաջին հայացքից՝ նրա կազմը հակասում է կադրերի ընտրության որոշ ընդունված չափորոշիչների. համարվում է, որ եթե նախագահը կառավարության կազմում ընդգրկում է աջակցության սեփական քաղաքական բազա ունեցող մարդկանց (որոնց, այդ իսկ պատճառով, որեւէ դեպքում հեշտ չի լինի ազատել), նա դրանով թուլացնում է վերահսկողության իր լծակները: Նմանօրինակ կերպով, ազգային անվտանգության հարցերով խորհրդականի, պետքարտուղարի եւ պաշտպանության նախարարի պաշտոններին երկրի քաղաքական ուղեգծի վերաբերյալ հաստատուն հայացքների տեր անձանց նշանակումը ստիպելու է նախագահին իր «կամային» խորհրդականների միջեւ վեճերի հարթեցման վրա շատ ուժ վատնել:

Հենց այսպիսի «աստղաբույլ» հավաքելու համար նորընտիր նախագահին հարկավոր են եղել ոչ քիչ քաղաքական արիություն եւ ինքնավստահություն. խիստ արժեքավոր որակներ մարդու համար, որի առջեւ հառնած է փլուզվող միջազգային կառուցվածքի կարգի բերման խնդիրը: Այդ պայմաններում, հնարավոր է, որ հենց ավանդական չափորոշիչների արհամարհումն ապահովի նախադրյալներ ստեղծագործական մոտեցման համար: Պետք է ենթադրել, որ Օբաման եւ պետքարտուղարի պաշտոնի նրա թեկնածուն՝ սենատոր Հիլարի Զլինթոնը, եկել են այն հետեւության, որ երկրի ու հասարակության շահը ներկայում իրենցից համագործակցություն է պահանջում:

Նրանք, ովքեր բառացիորեն են ընկալում «բարեկամ-ախոյան» արտահայտությունը, չեն հասկանում նախագահի եւ պետքարտուղարի միջեւ փոխհարաբերությունների էությունը: Ես չգիտեմ ոչ մի բացառություն հետեւյալ կանոնից. պետքարտուղարն ազդեցություն է վայելում սոսկ այն դեպքում, եթե նրան ընդունում են որպես «նախագահի ձեռք»: Ցանկացած այլ իրավիճակ թուլացնում է նախագահի դիրքերը, իսկ պետքարտուղարին պարզապես «նետում է ճամփեզրին»: Արտահոսքերի ու զրպարտության վաշինգտոնյան ջրաղացն աշխատում է ողջ հզորու-

թյամբ՝ ջանալով առավելագույնս խորացնել նրանց միջև ցանկացած տեսանելի խզում: Մյուս երկրների կառավարությունները նույնպես ջանում են օգտվել նման տարածայնություններից՝ Սպիտակ տան եւ Պետդեպարտամենտի նկատմամբ մշակելով այլընտրանքային ուղեգծեր: Որպեսզի արտաքին քաղաքականությունն իրականացվի արդյունավետ, իսկ Պետդեպարտամենտն այնտեղ էական դեր խաղա, անհրաժեշտ է, որ նախագահն ու պետքարտուղարը ունենան միջազգային կարգի վերաբերյալ միատեսակ հայացքներ, ընդհանուր ռազմավարական նպատակներ եւ դրանց հասնելու ընդհանուր մարտավարություն: Անխուսափելի տարածայնությունները պետք է հարթել փակ դռների հետեւում. ավելին՝ պետքարտուղարը սեփական մտահոգություններն ու կասկածներն արտահայտելիս որքան ավելի լավ կարողանա պահպանել զաղտմիությունը, այնքան մեծ է հավանականությունը, որ նախագահը դրանց ականջալուր կլինի:

Ամերիկյան դիվանագիտական ծառայությունն անգնահատելի գործիք է, որը հղկվել է գործին նվիրված արհեստավարժների շատ սերունդների կողմից: Ինչպես ցանկացած էլիտար կառույց, այն առանձնանում է որոշակի կլանայնությամբ: Մարդկանց կարծիքը, որոնք ծառայողական սանդուղքով ճանապարհ չեն անցել՝ սկսած ամենաստորին աստիճանից, այստեղ ոչ միշտ են լուրջ ընդունում (ելնելով այն տեսակետից, թե այդ մարդիկ կարող են դիվանագիտական արհեստավարժության «քննությունը» չհանձնել): Պետքարտուղարներին հաճախ հունից հանում է ներքին ընթացակարգերի խճճվածությունը, իսկ նախագահներն իրենց հուշերում գանգատվում են Պետդեպարտամենտի դանդաղկոտությունից:

Ամենօրյա աշխատանքում Պետդեպարտամենտն, ըստ էության, հեռագրեր մշակող վիթխարի մեքենա է, որն արձագանքում է ողջ աշխարհի ներկայացուցչություններից ստացված հազարավոր հաղորդագրությունների: Դեպքերի ճնշող մեծամասնությունում խոսքը ընթացիկ հարցերի մասին է. որեւէ ինստիտուցիոնալ ֆիլտր, որը զատում է երկրորդականը գլխավորից, արտաքին քաղաքական գերատեսչությունում չկա: Հեռագրերի ու նրանց պատասխանների մեծ մասն անցնում է պետքարտուղարի բազմաթիվ տեղակալների մոտով. սոսկ աննշան տոկոսն է հասնում հենց իրեն եւ ավելի քիչը՝ Սպիտակ տուն: Պետդեպարտամենտում չկան կառույցներ, որոնք թույլ տան օրգանապես նրա գործունեության մեջ ներառել աշխարհաքաղաքական ու ռազմավարական նկատառումներ: Թեեւ այնտեղ գոյություն ունի Քաղաքական պլանավորման խորհուրդ, սակայն այդ մարմնի գործունեությունը հաճախ հանգում է երկրորդական,

կիսավերացական բանավեճերի, որոնք կապ չունեն օպերատիվ աշխատանքի հետ, իսկ ավելի հաճախ՝ ղեկավարության ելույթների տեքստերի պատրաստման:

Պետքարտուղարի ներկայիս թեկնածուն, անշուշտ, ունի առաջնորդի որակներ, որը թույլ կտա կոտրել քարացած կարծրատիպերը եւ ցանկացած բանակցությունում վճռորոշ դեր խաղալ: Նրա առաջնահերթ խնդիրներն են. ապահովել ռազմավարական ղեկավար ցուցումները եւ Պետդեպարտամենտը վերակառուցել այնպես, որպեսզի տեղեկատվության հավաքման ու մշակման պլանում դիվանագիտական ծառայության արտակարգ ներուժը լրացվի որոշումների ընդունման նույնքան մեծ արդյունավետությամբ: Պետքարտուղարի այս դերն ունի բացառիկ նշանակություն, քանզի Պետդեպարտամենտը կազմակերպչական առումով առավել կողմնորոշված է դեպի սեփական ղեկավարը, քան Սպիտակ տուն:

Դեռ երբեք Ազգային անվտանգության հարցերով նախագահի խորհրդական չի նշանակվել ռազմական ղեկավարման մման փորձով անձնավորություն, ինչպիսին պաշտոնաթող գեներալ, Եվրոպայում ՆԱՏՕ Միացյալ զինված ուժերի եւ ծովային հետեւակային կորպուսի նախկին հրամանատար Ջեյմս Լ. Ջոնսն է: Արդյունքում՝ խորհրդականն անխուսափելիորեն կդառնա ոչ միայն նախագահի օգնական, այլեւ էական դեր կխաղա քաղաքական ուղեգծի մշակման գործում՝ հիմնվելով իր վիթխարի, գրեթե եզակի փորձի վրա:

Պնդումները, թե ազգային անվտանգության հարցերով խորհրդականը պետք է «շարժման կարգավորիչի», այլ ոչ թե քաղաքական որոշումների ընդունման գործընթացի մասնակցի դեր խաղա, կրում է ավելի շատ տեսական, քան գործնական բնույթ: Ոչ մի նախագահ չի ցանկանա, որ իր խորհրդականի դերը սահմանափակվի տեղեկատվական հոսքերի սխեմաների կազմմամբ, ինչպես սովորեցնում են պետական կառավարման ֆակուլտետներում: Բացի այդ, քանզի ազգային անվտանգության հարցերով խորհրդականը կանոնավոր կերպով հանդիպում է նախագահի հետ, կառավարչական գործառույթների եւ քաղաքական որոշումների վերաբերյալ խորհուրդների միջեւ տարբերակում դնելը, զուտ հոգեբանական պատճառներով, գործնականում անհնարին է:

Իդեալում՝ ազգային անվտանգության հարցերով խորհրդականի խնդիրն է. հոգ տանել, որպեսզի քաղաքական քայլերը հանգամանքների բերումով (որոնք հարկավոր է նախապես կանխագուշակել) անհաջողություն չկրեն, իսկ հնարավորությունները բաց չթողնվեն՝ դրանք ժամանակին չնկատելու պատճառով: Խորհրդականը պետք է երաշխավորի, որ

նախագահին կներկայացվեն գործողությունների բոլոր տարբերակները, իսկ ընդունված որոշման կատարումը կհամապատասխանի նրա պահանջներին: Գերատեսչությունները հաճախ սեփական առաջարկությունների ընդունումը դիտում են որպես հեղինակության հարց եւ ընդունված որոշումները մեկնաբանում այն իմաստով, որը համապատասխանում է իրենց առաջարկությունների ոգուն: Այսպիսով, ազգային անվտանգության հարցերով խորհրդականի դերը, որը պետք է անհրաժեշտության դեպքում պահանջի գործողությունների լրացուցիչ տարբերակների տրամադրում կամ նրանց առավել մանրակրկիտ մշակում, ինչպես նաեւ որոշումների կատարման ճշտություն, ոչ միշտ է խանդավառությամբ ընդունվում:

Խորհրդականը, ըստ սահմանման, ունի այնպիսի կարելոր առավելություն, ինչպիսին է «մուտքի հնարավորությունը»: Նրա աշխատասենյակը գտնվում է նախագահականից 50 ֆուտ հեռավորության վրա (համեմատության համար՝ պետքարտուղարին Սպիտակ տնից բաժանում է մեքենայով 10 րոպեի ճանապարհը): Համարվում է, որ դա խորհրդականին տալիս է առաջին դեմքի մոտ մուտքի հատուկ թույլտվություն: Բացի այդ, նրա պաշտոնական պարտականությունները կապված են գրեթե բացառապես այն խնդիրների հետ, որոնք հուզում են անձամբ նախագահին: Պետքարտուղարն ունի շատ «հաճախորդներ» աշխարհի բոլոր ծայրերից, որոնք նրա ուշադրությունն են պահանջում, իսկ պետության ղեկավարին ամենեւին ոչ բոլորն են հետաքրքրում: Բացի այդ, պետքարտուղարը հաճախ է գտնվում արտասահմանյան ուղեւորություններում, իսկ ազգային անվտանգության հարցերով խորհրդականը գրեթե միշտ գտնվում է նախագահի «ձեռքի տակ»: Պետության ղեկավարի հետ նրա առանձնակի հարաբերությունները պահանջում են հատուկ վարվելակերպ, որը խորհրդականները (ներառյալ ինձ) ոչ միշտ են դրսևորում:

Այն փաստը, որ պաշտպանության նախարարի պաշտոնը Օբաման թողեց Ռոբերտ Գեյթսին, նոր թիմի ձեւավորման գործընթացում ներմուծեց կարելոր հավասարակշռող տարր: Նա հիմնական խաղացողներից միակն է, որի համար այն եղավ քաղաքական գործընթացի մասնակցության ավարտական, այլ ոչ թե սկզբնական փուլը: Համաձայնելով անցողիկ ժամանակահատվածում մնալ Պենտագոնի ղեկին՝ նա «գորգի տակ» պայքարի անձնական շահագրգռվածություն չունի, որը ցանկացած նոր վարչակազմի իշխանության գալու ուղեկիցն է: Կանգ առնելով Գեյթսի թեկնածության վրա՝ Օբաման ու նրա խորհրդականներն, անշուշտ, հասկանում էին, որ նա պահպանելու է հավատարմությունն իր նախկին

համոզմունքներին: Գեյթսին սպասվում է դժվարին ադապտացիա նոր գործընկերների հետ. համոզմունքը, որ դա նրա ուժերից վեր չէ, տալիս է Բուշի վարչակազմում նրա գործունեությունը, որը բացարձակապես զուրկ է եղել նեղ կուսակցական մոտեցումներից: Նրա խնդիրն է ապահովել հաջորդականությունը եւ, միաժամանակ, մաքրել ճանապարհը նորի համար:

Ձեւն, անշուշտ, բովանդակությանը փոխարինող չէ: Բայց անգամ այս վերապահումով՝ ազգային անվտանգության ոլորտի նոր թիմի կազմը հույս է արթնացնում, որ Ամերիկան կհաղթահարի ճգնաժամը եւ կկարողանա լիովին օգտվել իր հնարավորություններից:

**«The Washington Post»**



# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գազիկ Տեր-Հարությունյան « ԲԱԶՄԱԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ » ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ .....	1
Ռուբեն Մելքոնյան ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ .....	5
Էրիան Էրսոյ « ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԸ ՔԻՉ ԵՆ ՀԱՃԱԽՈՒՄ ՄՁԿԻԹՆԵՐ ».....	9
Արաքս Փաշայան ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ .....	16
Սեւակ Սարուխանյան ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ .....	22
Սարգիս Հարությունյան ԷՆԵՐԳԵՏԻԿ ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ .....	26
Սուրեն Մանուկյան « ՀՈԼՈԴՈՄՈՐ »-Ը ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ .....	32
Իգոր Պանարին « ԱՄԵՐԻԿԱՆ ԱՅԼԵՎՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՉԻ ԼԻՆԻ » .....	39
Հենրի Քիսինջեր « ԱՄԵՐԻԿԱՆ ԿՀԱԴԹԱՀԱՐԻ ՃԳՆԱԺԱՄԸ » .....	44

*Շապիկին պատկերված է  
Արարատը՝ Բայազետից*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Սելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ Օ1Մ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: